

# Ա Ր Ա Ր Ա Տ

Թիւ Դ. — ՇՐՋԱՆ ԺԹ. 1886 ՏԱՐԻ ԺԹ. ԱՊՐԻԼ 30

## ԸՐԴՆՈՒԹԻՒՆ

### ՅԱՒԱՂՈՑՍ ՄԻՒՌՈՒԹԻ

Տարւոյս Յունիսի 15-ին, կաթուղիկէ Սուրբ Էջմիածնի տօնին ըստ յաջողելոյ Տեառն Ա-տուածոյ՝ Վեհափառ և Սրբազնագոյն Կաթուղիկոս ամենայն Հայոց Տ. ՄԱԿԱՐ մտադրեալ է Ս. Միւռոն օրհնել:

Ս. Միւռոնի օրհնութիւնը Հայաստանեայցս Եկեղեցւոյ նուիրական արարողութիւններից առաջինն է. Վեհ. Հայրապետը հաճեցաւ կանխաւ ի լուր ամենեցուն հրատարակել, որպէս զի ցանկացող բարեպաշտ հայ հոգևորականք և աշխարհականք լուսաւորչի սովորութեան ի ժամանակին ժամանեն ի Մայր Էջմիածին և վայելեն Ս. Միւռոնի օրհնութեան շնորհը:

# ԿՐՕՆԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԻՍ ՔՈ ՀԱՅՏԵԼԻՆ։

*Խաղաղութիւն եմ թողնում ձեզ, իմ խաղաղութիւնս եմ տալիս ձեզ։ Ոչ թէ ինչպէս աշխարհքս է տալիս, տալիս եմ ես ձեզ։ Ձեր սրտերը չխռովին ու չվախենան։*

*Աշխարհիս մէջ նեղութիւն կունենաք. բայց սիրտ առէք, ես յաղթեցի աշխարհին։*

Ա–է՛. ՅՈՎՀ. ԺԴ. 27. և ԺԶ. 33։

---

Ո՛րտեղ որ գնում եմ, ամեն տեղ էլ գանգատներ եմ լսում։ Մէկին իւր ամուսնութիւնից գոհ չէ, միւսը՝ ծանր պարտքերի տակից դուրս գալ չէ կարողանում ու ախ է քաշում, երրորդը՝ դաստատանի է ընկել, շատ հոգս է անում ու գլուխ դուրս չէ բերում, չորրորդը՝ վատ զաւակներ ունի։ Եթէ կարողանայինք անէ տուն, գեղէ գեղ, քաղաքէ քաղաք մանգալ, կը գտնէինք արդեօք մի ընտանիք, մի տուն, որոյ մէջ բնակուած տեսնէինք անպղտոր ուրախութիւն ու կատարեալ բաղդաւորութիւն։ Կարելի է՝ քանի հազար մարդոց մօտն կերթայինք ու հազիւ գտնէինք մի մարդ, որ իւր սրտի մէջինը ասէր թէ՝ «մենք կատարեալապէս գոհ ենք մեր կեանքից»։

Եթէ որ աշխարհիս մէջն այսչափ քիչ է ուրախութիւնն և այնչափ շատ են յայտնի ու ծածուկ ցաւերը, նեղութիւններն ու թշուառութիւնները, էլ ինչո՞ւ համար ենք Աստուծոյ բարութեանն ու իմաստութեանը փառք տալիս։ Մ՛իթէ բարութիւն է, որ մենք՝ տանջանքներով, նեղութիւններով ու անբախտութիւններով լիքը մի կեանք ունինք, որոյ մէջը, կարելի է, հազիւ մի օր բոլորովին անհոգս, գոհ և ուրախ անց կացանենք։ Մ՛իթէ իմաստութիւն է, որ մենք՝ տակաւ մարդիկս աւելի չարիքներով պատշաճած պիտի լինինք, քան թէ բարիք ու բարօրութիւն տեսնենք։

Երբ որ ես մարդոց տրած գանգատները քննում եմ, զարմանում լինիմ այն, որ նոցանից շատ շատերն անբաւղ են՝ ոչ թէ

իրանց հանգամանքներուն, որոնց մէջ իրօք գտնուելնին, այլ սեղի նորանին, որ իրանց անմիտ ու անտեղի ցանկութիւններուն հնազանդել չեն կարողանար։ Մի գործի տէր մարդ գանգատ է անում իր ձեռքի արհեստից, այսուհետ թէ՝ աշխատանք չկայ մէջն, թէ էլ այն օգուտը չէ ներում իրան, ինչ որ առաջն ունէր, և ասում թէ՝ շատ ցանկալի կլինէր իրան, որ կարողանար իւր հարեւանի գործին կպչի, որոյ մէջը բաներկեցութեան մի տակի աղբիւր է տեսնում։ Բայց երբ որ գնում ես նորա ասած հարեւանին, նա էլ անիծում է այն օրն, որ այդ իւր ձեռքն ունեցած գործին կպաւ, երբ ասէ, որ իւր ոչ մի զատակին չի յագցնիլ, որ իւր գործովը պարապի, որովհետև ձեռքը շատացել է։ Եթէ մանուկս մի պատուաւոր վաճառականի մեծ խանութը, ամառիկ գանգատելումէ նա էլ առուտուրի շատ պակասելուցն, ասելով թէ՝ ժամանակը վատացել է, մինչդեռ կարելի է, մի ուրիշ մարդ հէնց նոյն հանգամանաց մէջ լաւ առուտուր է անում, շատ փողեր դառնում, բայց իւր անխոհեմութիւնից՝ մեծ ու անհաշիւ բան բռնելով և իւր ոտն իւր վերմակի չափովը չձգելով, վերջապէս ոտնակոխեան անդունդքի բերանն է հասնում։ Կամ թէ՝ տեսնում ես, որ երկու մարդ մի և նոյն պաշտօնի եռանդից ևն ընկնում։ Մէկը չի նայում և միայն արտնջելով ու դժգոհելով է անում իւր յարմարաւոր չտեսնուելին ու չընդունուելին այդ պաշտօնին, մինչդեռ միւսը՝ մի քիչ ժամանակ որ մնում է այդ իւր նոր տեղումն, իւր այդ պաշտօնի ծանրութիւններից գրեթէ խեղդուած, իրան հետ միասին երբեմն նոյն պաշտօնի եռանդից ընկնողին է նախանձում, որ իւր մանաւոր վիճակովն բաղդաւոր է ու երանէ է տալիս նորան։—Ուրեմն այս ամեն դիպուածներում, նախ որ մարդ տանք, ըստ ինքեան վիճակը չէ, որից մենք գոհ և ուրախ չենք, այլ մեր միտքն ու սիրտն, որով մենք մեր վիճակը տանում ենք։ Երբեմն չափից դուրս փողի եռանդից ընկնելն է, երբեմն չափից դուրս պատուոյ եռանդից ընկնելն, որ դառնացնում է մեր վիճակը, որից գոհ կը լինէինք, եթէ չափաւորութիւնը սիրէինք, քիչով բաւականանալը գիտենայինք. այն ժամանակ մեր վիճակը մեզ համար լաւ վիճակ պէտք է համարէինք և ուրախ պիտի լինէինք։

Ամեն մի մարդ աշխարհիս վերայ մարդ է տալիս իւր տեսակէտից։ Ինչ որ մէկին անտանելի չարիք՝ կամ շատ վատ բան է երեւում, մի ուրիշի համար կարող է ցանկալի բարիք լինել. ինչ բա-

նի վերայ որ մէկը շատ է լինում, միւսը սուտիկ ուրախանում է։ Ուրեմն պէտք է ասենք, որ ընդհանրապէս չկայ ոչ մի չարիք, կամ վատ բան, այլ ինքներս ենք այդպէս համարում և մեզ համար չարիք ու վատ վիճակ շինում։ Ցոյց տանք մէկ վիճակ, որ ամեն մարդիկ՝ երիտասարդ՝ թէ ծեր, հարուստ՝ թէ աղքատ, ազէտ՝ թէ գիտուն և խմաստուն մարդ՝ միաբերան ասեն՝ թէ սա մեծագոյն չարիքը՝ կամ ամենավատ բանն էն ցայդ է։ — Մինչև անգամ մահն ամեն մարդու համար չարիք՝ կամ շատ վատ բան չէ, ինչու որ շատերը յոժար են և աւելի լաւ են համարում մեռնելն, որ իրանց ամօթ՝ կամ անպատուութիւն բերող մի բանից ազատուին։ Մինչև անգամ կան մարդիկ, որոնց համար ամօթ ու անպատուութիւնը շատ վատ բան չէ երևում, ինչու որ տանուամեն, միայն թէ աղքատութիւն չը քաշէ։ Մինչև անգամ աղքատութիւնն էլ մի չարիք, մի շատ վատ բան չէ, որովհետև հազարաւոր մարդիկ աղքատութեան մէջ են ապրում ու միշտ ուրախ են և առոզջ։ Առողջութիւն կորցնելն էլ մի մեծ չարիք չէ, քանի որ այնպիսի հիւանդներ ենք տեսնում, որ տարիներով պառկած են, տեղից վերկենալ չեն կարողանում, բայց էլի իրանց աչքերն տխրութեամբ չեն քցում դէպի երկինքն։

Եթէ որ բոլոր աշխարհս էլ մանգաս, հարցնես թէ՝ որն է ուրեմն ամենամեծ անբաղդութիւնն, որ ամեն մարդ էլ վկայում է թէ՝ մեծ անբաղդութիւն յիրաւի այդ է, այնչափ՝ տեսակ տեսակ պատասխաններ կը ստանաս, ինչպէս որ հարցրած լինէիր թէ՝ ամեն մի մարդ ինչն է համարում իր համար ամենամեծ բաղդաւորութիւն։

Սորանից մենք պէտք է հետևեցնենք վնասահութեամբ թէ՝ մեր բաժին ու վիճակներն, որ Աստուած ամեն մի մարդու որպէս և մեզ պարգևում է, բան ինքեան ամենն էլ հաւասարապէս լաւ են. բայց մարդիկն իրար հաւասար չեն, տարբեր են, որոնց Աստուած այդ կամ այն վիճակը պարգևում է։ Ինչ որ Աստուած անում է, բոլորն էլ բարի է. մարդս է միայն, որ բարիքի հետ չարիք է կպցնում, խառնում։ Ոչ թէ դրսից է գալիս մեզ վերայ չարիքն, այլ մեր ներսից է դուրս գալիս արտաքին աշխարհի վերայ կեանքի թշուառութիւնը։ Աշխարհքս իւր օրէնքներով ու կարգերով՝ միշտ նոյնն է մնում, բայց մահկանացու մարդս տարբեր կերպով է դատում աշխարհիս վերայ ու իւր տանջանքն հէնց դորանով նոյա

մէջը բերում, մոցնում։

Ուրեմն, այ մահկանացու մարդ, քո կեանքիդ վերայ տասը գանգատներիդ ես հանկանում եմ՝ ոչ թէ մարդուս կեանքն ինչ է, այլ թէ դու ինքդ ո՛վ ես, կամ ինչ ես։ Աղեքսիս ։ Հայելի՞ է, ինչպէս որ քեզ նորա մէջ մոիկ կը տաս ու կը տեսնես, ինքդ էլ այնպէս ես։

Աղեքսիս ։ Հայելի՞ն է։ Երեխան խաղումէ, զուարճանումէ, չի մանապով թէ՝ հագը, սխրնէթիւնն ինչ է. նորա համար էգոյիք չկան ամենևին։ Ամեռուայ ձիւնը նորան նոյնչափ զուարճութիւն է պատճառում, որքան որ գարնան ծաղիկներն են նորան ուրախութիւն բերում իրանց գեղեցկութիւնով։ Իր պարզամտութիւնովն վրայ է պրծնում նա ինչպէս իրան դիւրեկան, նոյնպէս և ոչ ախորժելի բանին վերայ։ Նա իր անմեղութեամբն ու անգիտութեամբն այնպէս է վարվում կեանքի հետ և տնտպէս է մոիկ տալիս նորա վերայ, ինչպէս որ իմաստունն ու քրիստոնեան պէտք է մոիկ տար, վարուէր ու անէր իր կեանքովն ու գործովն հաստատ և անփոփոխ սիդբունքով և հիմնական օրէնքներով ու պատուիրաններով։ Երկուսն էլ ինչպէս իմաստունն նոյնպէս և երեխան՝ սրտով կատ չեն լինում ոչ մի անցաւոր բանի. երեխան, որովհետև դեռ ևս քիչ ցանկութիւններ ունի, իսկ իմաստունն որովհետև չէ ուզում, որ իր ցանկութիւնները իր վերայ իշխեն։ Սորա համար ասաց Փրկիչն մեր Յիսուս Քրիստոս նորին մոքով թէ՝ եթէ այս երեխայիս պէս չլինէք, երկինքի արքայութիւնը մտնել չէք կարող։

Կեանքս ։ Հայելի՞ն է։ — Մի երեխայ լայ է լինում, որովհետև վայր ընկնելով, մի տեղը ցաւացրել է. թող քարի կոշտութեան վերայ զանգատ չանի, այլ հէնց իր անզգուշութեան վերայ։ Միևնոյն, որ տղան երեխայ չէ, տխրում է, որ կորուստներ ունեցաւ, իր ունեցած յոյսերը դատարկ դուրս եկան ու խաբուեցաւ։ Ի՞նչ է այնտեղ ամենագաղը բանը։ Ցիրաւի այն չէ, որ մենք աստուածային անքննելի խորհրդովն ու անօրէնութեամբ պիտի կատարվուէինք, չունենալով, ինչ որ ունէինք, կամ պէտք է ունենայինք, այլ այն, որ մենք ամենայն և դժգոհութեամբ պիտի յարմարուենք և ընդունենք այն, ինչ որ Հարկաւ անհրաժեշտ է, ինչ որ մեր կամքով փոխել, ուրիշ կերպ անել չենք կարող մեր չանկութեանը համեմատ՝ այն մեր պատմունքն է, որ մենք մեր ան-

վորութիւնների ու ցանկութիւնների մէջ վերջ տուցանք, վիրաւորեցանք, վնաս, զրկանք ունեցանք. այնպէս ենք զգում մեզ դժգոհ սրտով, երբ որ մեր անձնասիրութիւնը մի կորուկ ազդարարութիւն ու յորդոր է տացել: Աշխարհի անկատարութիւնը չէ սմենևևին այլ մեր իսկ անկատարութիւնն, որ մենք գանգատներ ենք անում շատերի առաջ: Դու ինքդ աւելի լաւ գիտես, որ կդալիս էլ որ գառնաս, քո սմեն բանդ էլ վատ կլինի:

Հա խօսում էր նոյնպէս այն անքախոս-ընկեր վերայ, որ մեզ ծնած ջղա-որ վեր-ը, մեզանից վեր ու մեր գլխին գալիս է: Եւ յիրաւի կան այնպիսի բաներ, որ մեզ պատահումեն ու մեր սրտին շատ ցաւ տալիս, ու մենք մեզ յանդիմանելու, նախատելու բան չունինք, որ մեր խելքիցն այդ բաներին հանդիպեցանք, պատճառը մենք ինքներս եղանք: Ինչ մեղաւոր է մի պարզ ու անմեղ արարած, ինչ կը գար ձեռքիցը մի արդար երեխայի, երբ որ վրան հիւանդութիւն է եկել ու անկողինքին մէջ պառկած, հանգստութիւն չէ գտնում, գանգատ է անում, լաց լինում, տանջում: Ինչ ձեռքիցը կը գայ այն երեխայի, որոյ անաւողջ ծնողքը մի տակառ, հիւանդոտ մարմին, կամ թունաւորուած ծուծեր իրանցից փոխանցելու պատճառ են եղել: Ինչ կը գայ ձեռքիցն մի արդար մարդու, որ անտէրիկ անարգանք ու զրկանք է կրում ու բանսում սև օրեր անց կացնում, երբ որ չարահոգի, անզգամ ու ամբարիշտ մարդիկ իրր վերայ սուտ գանգատներ են շինել, արել, զրպարտել և կաշառակերը դատաւորներով իրան դատապարտել են: Այսպէս շատ և շատ բաներ կան, որ մեր գլխին գալիս են, մեր սրտից արիւն հանում, մեր աչքերից արտասուք քամում, ու մեր մեղքից չէ, մենք սմենևևին մեղաւոր չլինելով ենք էլանք քաշում: Բայց այս սմեն մեր քաշածների մէջ՝ եթէ իրաւամբ յանդիմանենք, բայց մխիթարութիւն էլ ունինք, որ ասում ենք մեր սրտում թէ՝ Աստուծոյ կամքն այսպէս է եղել, երկնաւոր Տէրն ու Հայրն այսպէս է մեզ կամեցել: Բայց թէ ինչու համար է այդպէս անօրինել և ոչ ուրիշ կերպ, այդ բանը մենք չենք հասկանում, մեր խելքը չէ հասնում: Աստուծոյ խորհուրդներն մեզ համար անքննելի և անիմանալի են: Ո՞վ է կարող բոլոր աշխարհիս մէջ եղած կապակցութիւններն, օրէնքներն ու նպատակներն քննել, հասկանալ: Ո՞վ կը յանդգնի Աստուծոյ խորհուրդները քննել, իմանալ: Աշխարհիս սկզբից, որ սմենայն ինչ ստեղծուելով, գո-

յուրիւն ու կեանք է ստացել, ոչ մի բան առանց նպատակի նորա մէջ չէ եղել ու չկայ, ու Աստուծոյ նպատակները իւր անչափ ու ամբաւ բարութեանն համաձայն են, որ արեգակի նման պարզ երեւումէ այն ամեն բաներից, ինչ որ ինքը ստեղծել է։

Բայց մեր կեանքի շատ ու շատ չարիքն, որոյ վերայ մենք գանգատելու սովորութիւն ունինք, մեր գլխին գալիս են ջուր ջրից էլ եւ հետեւանք են մեր արած սխալանքի՝ կամ յանցանքի։ — Չէնց այս պատճառով էլ սովորաբար շատ աւելի ենք գոնգաւոլում մեր քաշածներից։ Մարդուս քնութիւնն այնպէս է, որ մենք այն անբաղդութիւններն, որ կրումենք եւ ինքներս չենք պատճառն, կամ մեր մեղքից չէ, որ մեր գլխին եկել են, աւելի մեծահոգութեամբ ենք տանում, այն՝ մինչեւ անգամ ուրախութեամբ ու պղնիւ հպարտութեամբ շատ ու շատ անգամ։ — Ա՛յն հիւանդութիւններն, որ քաշել են մարդիկ ու իրանք չեն եղել պատճառն, դեռ չէ պատահել, որ նորանց յուսահատութեան տանեն. բայց միշտ անտանելի է եղել եւ է, երբ որ վիրաւորումն մեզ, կպչեալ մեր պատուասիրութեանը, ժլատութեանը, հպարտութեանն եւ ուրիշ մեր մոլութիւններին։ Պապաճա՜ ու Մալա-Ինեսը հոգեայ հեռաւոր-ընկերներ են. ու ինչ որ հոգին կրումէ, աւելի ցաւալի է, քան թէ այն ամեն բանն, որ մեր մարմնոյն կարող է կպչել։

— Աչքաչքս ու հայելին է։ Դու ինձ պատ թէ ի նչպէս ես գտնում աշխարհիս, մարդոց ու քո իսկ դրութեանդ վերայ, ու ես քեզ կասեմ, թէ ինչ կրքեր են քո մէջդ ծաղկուած, որն յուզվումեն։ Դու անբաղդ ես, որովհետեւ գանգատվումես. բայց քո մէջդ ես կրում այն խայթոցը, որ քո յաջողութիւնդ ձախորդութեան դարձրեց, լաւ դրութիւնիդդ քեզ վատ դրութեան մէջ քցեց։ Ինքդ քեզ վորձիր ու ինքդ հարցուր քեզ թէ՝ ինչու համար քո սրտումդ զոհ չես քո դրութիւնիդդ, ինչու քո հանգամանացդ մէջ բաւարարուն բախտաւոր չես. ու դու կը գտնես հոգուդդ այն հիւանդութիւնն, որ ունես ու քաշում ես։ Դու կը տեսնես քաղ բոջը, դու կը գտնես այն պատճառը քո հիւանդութեանդդ՝ ոչ թէ քո շրջակայքումդ՝ կամ քեզ մօտիկ տեղերումն, այլ քո սրտիդ խորքումը։ Այնտեղ է վէրքը, ցաւը։ Յինսուն Քրիստոսի կրօնը առաջարկումէ քեզ հոգւոյ դեղ։ Աստուած քո բաղդատութիւնդ է կամենում. միայն դու մինչեւ յայժմ երբէք սրտանդ չես կամեցել այդ դեղն խմանալ թէ՝ որ տեղ է, այլ քո ինքնահաճութեամբդ

միայն այնտեղ ես պատել, որտեղ որ երբեք չէ գոնուել։ Ես քեզ ոչ խօսք ոչն կասեմ, ոչ իմ հոգին, հէնց մի խօսք վիճին. բայց այնպիսի մի խօսք է, որոյ մէջ քո փրկութիւնդ կը գտնես։ Ընդունիր այս խօսքս ու միտքը հասկացիր։ Նորանով քո վէրքերդ կը բժշկուին, քո հանգամանքներդ կը լաւանան։ Այս խօսքն այն վեպն է, որ քեզ հարկաւոր է՝ և այդ դեղը՝ ջ—ո—ր—ն—ն է։

Զոհաւոր եղիր քո ամենայն ցանկութեանդդ մէջ. չոհաւոր եղիր սիրելուդ և ատելուդ մէջը. չոհաւոր եղիր այն բանը վայելելուդ մէջը, որ քեզ ուրախացնում է. չոհաւոր եղիր շատ մեծ բանի տեղ դնելուդ, որպէս և պահպանելուդ այն բանն, ինչ որ անպատուր է, այս օր կայ, վաղը չկայ։ Զոհ ունեցիր, չոփ պահիր քո ամենայն բանիդ մէջն, ու անբախտութիւնն էլ քո դէմդ չոհ կը պահի, քեզ համար լուր չոփը կունենայ։

Աշխարհիս որչափ որ քիչ բան պահանջենք, այնչոփ աւելի հարուստ կըլինենք մեր մէջը։ Ինչ որ մեր մէջը կայ, ոչ ոք մեր ձեռքից առնել, մեզանից խլել չէ կարող։ Ինչու համար է մեր աչքը չիշտանալը մոռից։ Մեր վիճակով գոհ լինելն ամենամեծ հարստութիւնն է։ Ինչու համար է մեր բուռն ցանկութիւնը գերազանցութեան ու վաստքի հասնելու։ Առաքինութիւնն է միշտ ու միշտ մի պատիւն, որուն ոչ ոք վնասել չէ կարող։ Թող թէ ոչըն-չացնել։ Ինչու համար է շատ փափուկ հանգիստ ու փորթամ կեանքի ետևից ընկնելը։ Մի թէ ուզուտեն դու գերին լինել քո մարմնոյդ, որ կարելի է, դեռ մի տարի անց չկացած, գերեզմանում պէտք է փտի։ — Հայրդ, մայրդ, եղբայրդ, քոյրերդ, պատահներդ, քո սրտիդ սիրելիները մահկանացու են։ Միշտ մոքիդդ անկրկնուր ու պատրաստ կաց նրանից բաժանուելու ժամի համար։ Կամ նոքա քեզանից առաջ կը մեռնեն, կամ դու նրանց մահը կը տեսնես։ Նորանց հոգին կմնայ քեզ համար, ոչ թէ մարմինը։ Սորվեցուր քեզ վաղօրօք մոռանալու, որ դու մի օր քո սրտիդ ամենասիրելին էլ կը կորցնես. երբ որ այդպիսի մոռանքդ շատ առաջուանից քեզ պատրաստած կլինես մի շատ ծանր պրկանք և աննորոգելի կորուստ ունենալու, այն ժամանակ այդ կորուստն, որ ունենաս, էլ քեզ յուսահատութեան չի տանիլ ու ինքդ քեզ չես կորցնիլ։ Այն ժամանակ էլ, երբ որ, անպատրաստ չլինելովդ այդ մեծ անբաղդութիւնը կը հանդիպես, էլի դուարթ

դեմքով, քրիստոնէական համբերութեան ու հնազանդութեան ժպիտը երեսիդ, աչքդ կը քցես դէպի երկինքն ու կասես. Աստուած չէ՞ մի անմահ հոգիների Հայրն, ու այս քոյր աշխարհս մեր հայրական առունը չէ՞ մի։

Արդէն շատ անգամ փոխ սրտիս խորքը շարժող մի տարբ հիացումն եմ ղգացել, երբ որ կարդացել եմ Ցիսուսի Քրիստոսի այն խօսքերն, որ Նա ասել է իւր աշակերտացն՝ իւր մահուանից առաջ նրանց հետ մնաք բարեւ անելու ու նրանցից բաժանուելու միջոցին. «Ի՛մ խաղաղութի՛ւնս եմ պարգեւ ձեզ, ի՛մ խաղաղութի՛ւնս եմ ընծա՛յ ձեզ. այնպէս ևմ պարգեւ ձեզ ինձմէ աշխարհս է պարգեւ»։ ու յետոյ էլ ասէ՝ «Սիրտերիդ դէմը նեղութի՛ւն կունենայ, բայց քաջ ա՛ռէք, ես յաղթեցի աշխարհին»։—Ի՛նչ գերաշխար հիկ, ինչ առատաձայնի խմաստութիւն կայ այս խօսքերիս մէջ Նորա, որ չարչարանքներով լի մահուան առաջն էր գնում։ Նա իր հոգւոյ մէջը յաղթել էր արդէն այն ամենայն զարհուրանքներին, որ անագորոյն կերպով իւր առաջն էին։ արդէն նա իրրև յաղթական կանգնած էր, մի լինելով իւր Հօր հետ, որ երկնքումն է։ Իւր վերայ չի մտածում Նա, այլ միայն իւր սրտին թանկագին աշակերտներին վերայ, որոնց որ սիրտ թողնէր այս աշխարհիս մէջ և ուզում էր նրանց՝ իրրև մի աղնուագոյն բան՝ կտակով թողնել նորանց այն խաղաղութիւնն, որն որ ինքն, պայծառացած, կրում էր իւր սրտի մէջն։

Ես դնում եմ ինձ խոնարհութեամբ Նորա աշակերտաց կարգն և ուզում եմ Նորան ու ասում՝ աչքս դէպի երկինք քցած. Տէր, ինձ էլ տուր այդ խաղաղութի՛ւնդ։ Աշխարհիս մէջն ես էլ դեռ նեղութիւն ունիմ և ուրիշ ոչ մի տեղ օգնութիւն գտնել չեմ կարող, բայց միայն Նորա մոտ և Նորանից, որ յաղթել է աշխարհքին։ Նա անդադրունկ քաշեց ու տարաբ իւր քաշելուս, ամենաճանր չարչարանքներն, որ հետևեալ այնպէս էր իւր Հօր կամքը. Նա արհամարհել էր թագաւորական թագն, որ ժողովուրդն իրան առաջարկել էր, որպէս զի վշեալ սրտակն բնաւրի, ինչու որ մարդկային վրիպութեան համար այդպէս անելն էր լաւ. Նա հրաժարեց իւր կեանքի ամենայն ուրախութիւններից և միայն մտածումէր իւր եղբայրների վրիպութեան վերայ։ Որպիսի անպատմելի մեծութիւն մտքի և գործի մէջ, և որպիսի երկնային երջանկութիւնով պիտի լցուած լինէր Նորա սիրտն, երբ որ Նա, մեռ-

*նելու ժամանակը, բացականչեց այս յաղթական խօսքը՝ «ամենայն ինչ կատարեալ է»։*

*Գէտք է հետևիմ իմ Փրկչիս գնացած ճանապարհին, նորա պէս պիտի բարւոք պատերազմը պատերազմեմ, քանի որ ողջ եմ, և ամենայն իմ գլխիս եկածների մէջը, աղօթք անելով՝ ասեմ, ապա ինձ հետ ինչ որ քո կամքդ է, միայն քո խաղաղութիւնդ տուր ինձ։*

(Թարգմ.) Գ. Ն. Ա.

---

## ՀԱՑԱՍՏԱՆԱՑՈՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.

(Շարունակ. Ա. տպագ. 1886 Ը. Գ.)

### ԴԼ. Ը.

Ղազար Ջահկեցուն յաջորդ ընտրուեց Կ. Պոլսոյ պատրիարք Մինաս Ակնեցի, որ-գալով Ս. Էջմիածին՝ 1751 թուի Սեպտեմբերին, Ս. Խաչի տօնին առաջ օծումն ընդունեց և 1753 թուի Մայիսի 12 ին վախճանուեց ու թաղուեց Ս. Գայիանէի գաւթի ձախ կողմը, հազիւ մի տարի ութ ամիս վարելով Հայրապետական իշխանութիւնն։

Մինաս Ակնեցու էջմիածնի կաթուղիկոս ընտրուելուց յետոյ Կ. Պոլսոյ պատրիարք կարգուեց Գէորգ վարդապետ Աբանոսցի, բայց կարճ ժամանակով, որովհետև Յակոբ Նալեան, որ Երուսաղէմումն էր, այնտեղ ուխտի գնացած մեծ ազդեցութեան տէր Ակնեցի եպտուք ամիրային հաճոյանալով՝ նորա հետ Կ. Պոլիս վերադարձաւ և նորա հզօր ազդեցութեամբ 1752 թուին ինքն Կ. Պոլսոյ պատրիարք կարգուեց, իսկ Երուսաղէմայ միաբանութիւնից կանխաւ ընտրուած Գրիգոր Ղրիմեան աշակերտ Թէոդորոս կամ Թորոս վարդապետ՝ Երուսաղէմայ։

Մինաս Ակնեցու մահից յետոյ Ս. Էջմիածնի միաբանից ժողովը որոշեց Յակոբ Նալեանին կամ Կեղեցի Սահակ Ահագինին բան հաւանութեան ազգի կաթուղիկոս ընտրել։ Կ. Պոլսում գումարուած ժողովում՝ թէ Նալեան և թէ Սահակ Ահագին հրաժարուեցին ընտրելիութիւնից, ուստի հաճութեամբ ժողովոյն՝ կաթուղիկոս ընտրուեց Էջմիածնի բազմամեայ և ի մանկութենէ հետէ բազմաշ-

*խոտ միաբան Ղարագաշ մականունաւոր Աղէքսանդր Բիւզանդացի, որ Պետրոս Քիւթուրի հետ շատ տառապանք էր կրել Դավար Զահկեցուց։*

*Աղէքսանդր Բ. Բիւզանդացի ժողովականաց թափանձանքին չկարողանալով դիմագրել, յանձն առաւ կաթուղիկոսական կոչումն և ընդ ցամաք ճանապարհորդելով ու ժողովրդեան այցելելով՝ հասաւ Էջմիածին, 1754 թուի Մարտի 6 ին տուրք օծումն ընդունեց, և մի և կէս ամեայ իշխանութիւնից յետոյ 1755 թուի Նոյեմբերի 11 ին վախճանուեց ու թաղուեց Էջմիածնի արևմտեան դրան հարաւային կողմը, զանգակատան տակ։*

*Էջմիածնի միաբանական ժողովը յայտնելով Կ. Պօլսոյ պատրիարքարանին Աղէքսանդր Բ-ի մահը, իբրև կաթուղիկոսական ընտրելի իւր կողմից տղգի հաւանութեան առաջարկեց դարձեալ Յակոբը Նալեանին և կեղեցի Սահակ Ահագինին։*

*1755 թուին Սահակ Ահագին ընտրուեց կաթուղիկոս, բայց մի տարի Կ. Պօլսում, երեք տարի և աւ Կարնոյ Մուտուրկան գիւղի Ս. Լուսաւորիչ և Հնձուց գիւղի Կարմիր վանքում մնաց, աղգը տեսնելով որ Սահակ իւր պաշտօնատեղին չէ շուտափոյթ գնալ, Զմիւռնիոյ առաջնորդ և Կ. Պօլսոյ նուիրակ Սիմէօն վարդապետ Երեւանցու և Զմիւռնիայի նոր առաջնորդ նշանակուած Աբրահամ վարդապետ Աստապատցու ջանքով 1759 թուին կաթուղիկոսական նոր ընտրութեան ժողով գումարեց Կ. Պօլսում, որ գոհընկէց հրատարակելով Սահակ Ահագինին՝ կաթուղիկոս ընտրեց Էջմիածնի կաթուղիկոսական տեղակալ Յակոբը Շամախեցուն, որ այն ժամանակ Կարինում՝ Սահակ Ահագնի մօտ գտնուելուն համար նոյն Աբրահամ վարդապետ Աստապատցու, ի կողմանէ Կ. Պօլսոյ պատրիարքարանի պատգամաւորութեամբ իմանալով իւր կաթուղիկոս ընտրուիլը՝ Սահակ Ահագինից հաշիւները առացաւ, եկաւ Էջմիածին և նոյն 1759 թուի Նոյեմբերի 24 ին տուրք օծումն ընդունեց։*

*Յակոբը Ե. Շամախեցի իմանկաւթենէ Ս. Էջմիածնում դաստիարակուելով, իւր ընաձիր ուշիմութեամբ Էջմիածնի միաբանութեան մէջ առաջնակարգ և շատ կարևոր դիրք էր ստացել. նա մեծ ազդեցութիւն ունէր միաբանից վերայ իբրև նոցա մեծագոյն մասի ուսուցիչն ու դաստիարակը. այս ազդեցութեան նպաստեցին և այն հանգամանքը, որ լինելով հմուտ արքունական և դա-*

տուրական կարգերին՝ ամեն բանում խորհրդակից էր եղել նախ քան ինքն կաթուղիկոսներին և ինքն է պատրաստելիս եղել նոցա համար հարկաւոր թղթերի նախագաղափարը։ Յակովբ Ե. Շամախեցի շինեց Երևանայ Զօրագեղի անապատում հայրապետարան և բարձր պարիսպներով շրջապատեց։

Մինչ Յակովբ Ե. Շամախեցի էջմիածնում շինութեամբ և բարեկարգութեամբ էր ղբաղուած Կ. Պօլսում դրդմամբ ոմն Բաղիշեցի Մանուէլ քահանայի, յորդուեց կաթուղիկութեան կնիքը։ Մանուէլ քահանայ իբրև ջատագով մայրենի եկեղեցու՝ հրամարատակ ստացաւ և ձերբակալելով շատ կաթոլիկներ՝ նահատակեց աքսորալայրը աքսորեց։ Յակովբ պատրիարք յուզում մեղրը դադարեցնելու համար եպարքոսի ապեանում երաշխաւորելով որ, աքսորեալները անտեղի կասկածի համար միայն են աքսորուած, նոցա ազատեց և Մանուէլ քահանային իբրև խռովարար աքսորել տուեց։

Յակովբ Ե. Շամախեցի երեք տարի ութ ամիս հայրապետական իշխանութիւն վարելով՝ վախճանուեց 1763 թուին և թաղուեց Ս. Գայիանէի վանքի գաւթում աջ կողմը։

Շամախեցի Յակովբ Ե.-ի յետոյ 1763 թուին Ս. էջմիածնի միաբանական ժողովով և ազգի հաճութեամբ ընտրուեց Սիմէօն Երևանցի և նոյն թուի Ապրելի 20-ին կաթուղիկոսական աոոը օծումն ընդունեց։

Սիմէօն դեռ կաթուղիկոս չեղած՝ նուիրակութեամբ շատ տեղեր շրջած և ականատես եղած՝ լաւ ծանօթ էր Հայոց դրութեանը։ Այս ծանօթութեամբ՝ իւր իշխանութիւնը փոխադրեց այնպիսի մեծագործութեանց ձեռք զարկելով՝ որ ամբողջ Կովկասում առաջինն էին։ Այսպէս կաթոլիկ քարոզիչների և մխիթարեանց կաթոլիկական դրքերի մուտքը Հայոց մէջ կարճելու համար կարգաւորեց Տօնացոյցը, որով սահմանեց Հայ նշանաւոր տօները շաբաթ օրերը հանդիսաւոր կերպով տօնել և մեծի պահոց մէջ Ս. Յովհաննէս Երուսաղէմայ Հայրապետի և Ս. Յովհաննէս Օձնեցու հետ տօնել ընդհանուրների դէմ քաջ ախոյեան Յովհաննէս Որոտնեցու, Գրիգոր և Մովսէս Տաթեւացիների յիշատակը։ Կարնոյ կարմիր վանքի նուիրակ Գէորգ վարդապետին՝ որ կաթոլիկութեան սերմեր էր ցանում Ախալցխայի մէջ՝ տաճկաց արքունի հրովարտակով բերել տուեց էջմիածին և տասնիկ պատուհասե-

լուծ յիւսոյ մեղայականն ստանալով՝ արձակեց։ Ցաճկաց արքունի հրովարտակով հալածեց կաթոլիկ այլազգի քարոզիչներին, մնացեալ ժողովրդեանը յուղղութիւն բերել տեղական պաշտօնեաների միջոցաւ սպասեցոյց, իսկ հոգեւորականներին էջմիածին բերել տալով՝ յանդիմանեց, պնդեց և ի սրտէ զղջալ տալով՝ արձակեց։

Միաբանից սենեակների հիւսիսակողմը առանձին գաւթով զըպրոց շինեց և բարեկարգեց։ Մի քանի կրօնական գրքեր գրեց աստուածային յարձակուելով հռովմէականների վերայ և խրատելով ժողովրդին՝ որ հեռի կենան այդ մոլորեցուցիչներից՝ իրանց մասնաւոր և հոգեւոր իրկութիւնը միայն Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ տեսնելով։ Կաթուղիկոսարանում տահճանեց մի ցիշատակարան (Ջամբռ, տպեալ ի Ս. Էջմիածին ի 1873 ամի), որ ամեն մի կաթուղիկոս իւր ժամանակի անցքերը, և իւր կատարած գործերը մէջը արձանագրի, և ինքն սկիզբն դրեց գործին՝ մինչև ինքն հայրապետների պատմութիւնը համառօտելով, էջմիածնի քոյոր կալուածների անուանները և նոցա արտօնագրերի ու հրովարտակների օրինակները արձանագրելով, մանրամասն նկարագրելով Հայրապետարանի կարգ ու հանոնները, հայրապետների քրիստոնէայ և մահմետական թագաւորների, երուսաղէմայ և Կ. Պօլսոյ պատրիարքների, Աղուանից, Սսոյ և Աղթամարայ կաթուղիկոսների հետ ունենալիք յարաբերութեանց ձևերը *)։

Հայոց ազգը դանազան տերութեանց մէջ ցրուած լինելով, պայմանական յարաբերութեան մէջ էր Ս. Էջմիածնի Մայր Աթոռի հետ։ Ա. յս իսկ պատճառով հայրապետները միայն Պարսկաստանի Հայոց վերայ լիակատար իրաւունք և անմիջական յարաբերութիւն ունէին, իսկ արտասահմանեան Հայոց վիճակները երկար կարգ էին բաժանուած, նուիրակական և տէրունի։

Նուիրակական վիճակները երեք տարին միանգամ նուիրակ ընդունելով, նորա հետ և տուրք միւռոն և հայրապետի օրհնութիւնը, նուիրակական հասոյթը միայն էին տալու, իսկ տէրունի վիճակները ենթարկուում էին ուղղակի Էջմիածնի իրատասութեանը, որ կարգում առաջնորդներ և տանուտէր առաջնորդական և նուիրակական հասոյթները։ Տես տեսչը այս կարգը խանգարուած

(*) Ջամբռ գլ. Թ—ԺԲ. եր. 58—99

էր և Սիմէօն կաթուղիկոս վերահաստատելով կանոնաւորեց նախկին կարգը։

Ռուսաստանեայք Վազար Չահկեցու կարգած Բարսեղ եպիսկոպոս Փառակեցուց զգուած՝ դուրս գալով էջմիածնի իրաւասութիւնից՝ Աղուանից կաթուղիկոսներին էին ենթարկվում։ Սիմէօն կաթուղիկոս այս պառակտումը բառնալու համար Թիֆլիզեցի Գաւիթ եպիսկոպոսի պատուիրակութեամբ մի արծաթեայ ոսկեզօծ տուփի մէջ ամիսփաթ սուրբ մասունքներ ընծայ ուղարկելով Ռուսաց եկատերինէ Բ. կայսերահօն՝ խնդրեց Ռուսաստանի Հայոցը դարձեալ էջմիածնի իրաւասութեան ենթարկել։ Կայսերուհին 1768 թուի Յունիսի 30-ին տուած հրովարտակով*) ոչ միայն Սիմէօնի խնդիրը կատարեց, այլ և թանկագին ընծաներ նա ուղարկեց։ Իսկ Սիմէօն կաթուղիկոս իւրոյ երախտագիտութեան գրեց կայսերական տան համար գոհացողական մաղթանքը, որ գտնւում է դրւում Ռուսաստանի Հայոց եկեղեցիներում կայսերական տօներին։

Բացի Ռուսաստանի հայերից, որոնց առաջնորդ և նուիրակ կարգեց Սիմէօն սկզբում՝ Մինաս արքեպիսկոպոսին և յետոյ Արշաւիրեան Յովնէվի արքեպիսկոպոսին, էջմիածնի տէրունի վիճակ էին Տաճկաստանում Ջմիւռնիա իւր թեմերով և Բաղդատ ու Բասրա քաղաքները և Հնդկաստան։ Նուիրակական վիճակներն էին իրանց թեմերով Տաճկաստանում։ — Ա. Կ. Պօլիս, Բ. Թրակիա (Թէքիրդաղ), Գ. Կրիմ և Բեսարաբիա, Դ. Ռումելիա, Ե. Անատօլիայի հիւսիսային մասը, Զ. Անատօլիայի հարաւային մասը, Է. Կարին և Էրզրում։

Սիմէօն կաթուղիկոս միմիայն Ս. Էջմիածնի Մայր Աթոռը կենտրօնն և հայրապետը իսկապէս ամենայն Հայոց կաթուղիկոս կացուցանելու համար աշխատութեամբ էջմիածնի գերիշխանութեան տակ Սսի, Աղթամարայ և Աղուանից կաթուղիկոսներին մի մի վիճակաւորներ հնամարել տալ, իսկ Երուսաղէմայ և Կ. Պօլսոյ պատրիարքներին՝ մի մի արքեպիսկոպոս։ Եւ Կ. Պօլսում, որպէս Տաճկաստանի գլխաւոր կենտրօնում, կամենում էր Ջմիւռնիոյ առաջնորդ և Կ. Պօլսոյ նուիրակ Առաքել Աբրահամ եպիսկոպոսին կա-

(*) Պատմ. կաթուղիկոսաց Էջմիածնի, գործ Մսերայ Մագիստրոսի Մսերեանց, տպակալ ի Մոսկվա, ի 1876 ամի. եր. 161—163։

*թուղիկոսական փոխանորդ կարգել, որ չը յաջողեց, որովհետև թէ Յակովբ Նալեան, որ վախճանուեց 1764 թուին Յուլիսի 18-ին և թէ նորանից յետոյ Բասմաճեան Երիգոր պատրիարք չէին կամենում այդ. և Երիգոր Կ. Պօլսոյ երեւելիներից ժողով գումարելով, նոցա խորհրդով և արքունի հրամանով՝ փոխանորդութեան թեկնածու Աբրահամ եպիսկոպոսին աքսորեց Կ. Պօլսից; Երիգոր պատրիարք 1773 թուին հրաժարուելով պատրիարքութիւնից Կիպրոսի առաջնորդութեան պատրուակով գնաց Եւրոպա*): Երիգոր Բասմաճեանին յաջորդեց 1774 թուին Էջմիածնի նուիրակ Կաղզուանցի Զաքարիա եպիսկոպոս, որ Հայաստանեայց եկեղեցւոյ նախանձախնդրութեամբ սկսեց հալածել լատինամիտներին:*

*Սիմէօն կաթուղիկոսի ժամանակ Աղուանից կաթուղիկոսութեան պատճառով խռովութիւնը շատ սաստկացած էր և այս խռովութիւնը սկսուած էր 1674 թուից, ամն Սիմէօն եպիսկոպոսի՝ առանց Աղուանից տան ընտրութեան և Էջմիածնի ընդհանրական հայրապետի հաւանութեան կաթուղիկոսանալովը և առնելով Գանձասարու աթոռի գայքն՝ իւր գլուղը առանձնալովը: Յակովբ կաթուղիկոս Ջուղայեցի տեսնելով այս ինքնակոչ Սիմէօնի ապօրէն վարմունքը՝ բանադրութեամբ նորան և Աղուանից երկրից ամն Երեմիա աբեղայի եպիսկոպոս և կաթուղիկոս օծելով ուղարկեմ Գանձասար: Յակովբ կաթուղիկոս Ջուղայեցի՝ ինքնակոչ Սիմէօնին սանձահարելու համար բերել է տալիս Էջմիածին՝ և ստորագրութիւն է առնում՝, որ նա չըհամաձակուի եպիսկոպոս ձեռնադրել, միւռոն օրհնել, և իւր ազգականներից կաթուղիկոս օծել:*

*Յետ ժամանակաց Սիմէօն ու Երեմիա վախճանվում են, և ինքնագլուխ կաթուղիկոսանում ամն Եսայի, բայց իւր սիաչն զգալով՝ դիմում էջմիածին Նահապետ կաթուղիկոսին, որ վաւերացնում նորա կաթուղիկոսական իշխանութիւնը, և ահա բանագրուած Սիմէօնի ազգականներից ամն Եսայիս ինքնագլուխ կաթուղիկոս է օծվում. Աղէքսանդր Ջուղայեցին Աղուանից այս երկու կաթուղիկոսներին էլ բերել տալով իւր մօտ՝ Ս. Էջմիածնի տաճարում ժողով է կազմում՝, ուր պարտաւորվում Եսայիս*

(*) Ըստ Չամչեանի «չորս յերկիր քրիստոնէից, ուր և կայ մինչև ցայսօր հոգացեալ միայն զփրկութիւն հոգւոյ» (Հատ. Գ. եր. 877). Ա. Չամչեան «զփրկութիւն հոգւոյ» ասելով կաթոլիկութիւն է հասկանում:

և բանադրվում՝ իսկ նոյն վերահաստատվումէ կաթուղիկոսական իշխանութեան մէջ, պայմանաւ՝ որ Աղուանից կաթուղիկոսները իրրև յաջորդ Ս. Գրիգորիսի՝ Լուսաւորչի յաջորդից, այսինքն Էջմիածնի կաթուղիկոսից ստանան Աղուանից կաթուղիկոսական օծումն:

Վախճանումէ նոյն կաթուղիկոս, և բանադրեալ Ներսէսը օգուտ քաղելով պատերազմական յարձակումներից, առպատակութիւններից, աւերմունքներից և Էջմիածնի կաթուղիկոսների շուտ շուտ մեկը միւսին յաջորդելուց՝ սկսում է վարել կաթուղիկոսական իրաւունք՝ մինչև որ Վազգ Զահկեցին պարտաւորեցնում է նորան խոստովանել իւր բանադրուած լինելը, և ապա Էջմիածնին հնազանդութեան, և իւր ձեռից ապօրինաբար կաթուղիկոս չօծելու երդմնագիր առնելով՝ արձակում է, թոյլ տալով վարել Աղուանից կաթուղիկոսութիւնը: Սակայն դեռ Ներսէս չըվախճանուած՝ նորա ազգականներից մինը, դեռ պատանի հասակով, Խոսրայէլ աբեղայ Գանձակու Շահ-Վերդի խանի ձեռնտուութեամբ օծվում է կաթուղիկոս և նորից սկսվում է երկպատակութիւնը:

Սիմէօն Երևանցի կաթուղիկոսանալով Էջմիածնում՝ ինքնին ծայ Խոսրայէլին հրաւիրում է Էջմիածին, որ եթէ Աղուանից երկիրը կըկամենայ, վերահաստատէ նորան կաթուղիկոսական իշխանութեան մէջ, սակայն մինչ Խոսրայէլ պատրիր պատճառաբերութեամբ յետաձգում էջմիածին գալը, Շուշւոյ Փանահ-Խանը հայ մելիքների մէջ երկպառակութիւնը աւելի և ևս զօրացնելու համար մի կուսակցութեան պարագլուխ հանդիսանալով՝ յանձնարարական գրով յանուն Սիմէօն կաթուղիկոսի յիսուն անձանց հետ Յովհաննէս եպիսկոպոսին ուղարկում է Էջմիածին՝ Աղուանից կաթուղիկոս ձեռնադրելու համար. Փանահ-Խանը գրում է մի թուղթ և ևս Երևանայ խանի վերայ, որ ստիպէ Սիմէօնին՝ Յովհաննէսին անպատճառ Աղուանից կաթուղիկոս օծել:

Ոչ հայերի թախանձանքը, և ոչ Երևանայ խանի սպառնալիքն ու խոշտանգանքը ներգործութիւն ունեցան Սիմէօնի վերայ. Սիմէօն Յովհաննէսին չօծեց, և համոզում էր աղուանցիներին որ արդէն օծուած Խոսրայէլի հետ հաշտուեն, և երկպառակութիւնը վերջացնեն: Սիմէօն կաթուղիկոս այսպէս էր վարվում, որովհետև լաւ գիտէր որ Երևանայ և Շուշւոյ խաները միմեանց կամակա-

*տեր հանդիսանալով՝ կամենում էին Հայոց դէմ մի դաշնակցութիւն կազմել. իսկ Նաւշէայ Փանահ—Խանի՝ կաթուղիկոսական գործին խառնուելը համարում էր նպատակաւոր մի բան, որով նա հայ մելիքների մէջ արդէն եղած ներքին երկպառակութիւնը զօրացնելով՝ կամենում էր նոցա թուլացնել և այսպէս բոլորին տիրել։*

*Յովհաննէս եպիսկոպոս իւրայինների հետ էջմիածնից դուրս գալով, գնաց Գանձասար և հակառակ Սիմէօնի համոզանաց կաթուղիկոս օծուեց։ Գործը աւելի ևս դժուարացաւ. որովհետև, Խոսրովի կուսակիցները Գանձակի Շահ—Վերդի խանի ձեռքով ապստամբելիք էին գրում Սիմէօնին՝ որ Խոսրովին հաստատի կաթուղիկոս, ապա թէ ոչ՝ մեծ արիւնհեղութեան պատճառ կըդառնայ. նոյնը կրկնում էին Յովհաննէսի կուսակից մելիքները, Փանահ-խանի ձեռքով և Երևանայ Հիւսէյն-Ալի խանի միջոցաւ։ Սիմէօն՝ խաներին պատասխանելով որ՝ նոցա գործը չէ հայ հոգևորական գործերին խառնուիլ, հայերին գրում է որ, Խոսրովն էլ Յովհաննէսն էլ ապօրինաբար են կաթուղիկոսացած, սիրտ գան էջմիածին, և որին Աստուած կըկամենայ՝ նա կըհաստատուի կաթուղիկոս։*

*Հայք զղուած այս երկպառակեալ դրութիւնից՝ առաջարկեցին Սիմէօն կաթուղիկոսին ում կամենայ՝ հաստատէ կաթուղիկոս, միայն թէ հաստատեալը Գանձասարու աթոռում նստի։ Սիմէօն առաջարկեց Յովհաննէսին և Խոսրովին գալ էջմիածին, և նոցանից ո՛րը կերդուի ու կըխոստանայ Գանձասարում կենալ, վերահաստատուելով կաթուղիկոսական իշխանութեան մէջ կըվերադառնայ իւր աթոռը. Յովհաննէս անմիջապէս ընդունեց հայրապետի առաջարկութիւնը, իսկ Խոսրովը ոչ, թէև Սիմէօն կաթուղիկոս Աղուանից կաթուղիկոսութիւնը վերապահում էր նորան և Վրաց Հերակլ Թագաւորի գրով Թիֆլիսի Զաքարիա եպիսկոպոսին ևս հրաւերակ էր ուղարկել։ Երբ Զաքարիան ձեռնունայն վերադարձաւ, բերելով Խոսրովի յամառութեան թուղթը, Սիմէօն էջմիածին Տաճարում ժողով գումարելով՝ բանադրեց և լուծեալ հրատարակեց Խոսրովին, իսկ Յովհաննէսին 1765 թուի Դեկտեմբերի 25-ին վերահաստատեց Ալուանից կաթուղիկոսական իշխանութեան մէջ և ուղարկեց Գանձասար Զաքարիա եպիսկոպոսի հետ*)։*

---

(*) Ջամըռ գլ. Ծ. եր. 80—91։

Ա. յս հինգեռատ խնդրին եղբ տալուց յետոյ Սիմէօն ձեռք զարկեց էջմիածնում այնպիսի շինութիւններ անելու, որոնք իսկապէս մեծագործութիւններ են. Վաղարշապատ գիւղը, որ վանքի արևմտեան կողմն էր գտնվում և համարեա պատկից էր վանքին՝ բաւական հեռաւորութեամբ հիւսիսային կողմը փոխադրեց, և յատուկ ծիական հեղեցի շինեց գիւղացւոց համար. Վանքը եկուզակների յարձակումներից պատսպարելու համար ընդարձակ և ամուր պարիսպներով ու բուրգերով շրջապատեց. նորոգեց արտաքին գաւթում եղած շուկան, և Թանապի կաչեցեալ սենեակները հանի կողմից մի կարգ սենեակներով ևս ընդարձակեց. Մոնաստանն շինեց յարմարաւոր աւազանով և պարագոյնք. Ներսի Վազարապատը Հայրապետանոցից բաժանելու համար երկայրկ մի ապարանք շինեց Հայրապետի ամուան բնակութեան համար. շինեց ամառնային սեղանատունը, և միաբանութեան սենեակները ու Տաճարը խոնաւութիւնից ազատելու համար ստորերկրեայ ջրանցքներ փորել տուեց վանքի և սենեակների տակ, որ միացնելով՝ պարապից դուրս՝ իատնեց Փիլիպպոս կաթուղիկոս Աղբակեցու շինած ջրանցքին (Սուրն - Թանքան): Հարստացրեց էջմիածինը նոր նոր կալուածներ ձեռք բերելով և հներն ևս պարսիկ շահերի հրովարտակներով վերահաստատելով:

Մայր Աթոռը արժանի իւր կոչմանը կրօնական դաստիարակութեան կենտրօն հանդիսացնելու համար 1776 թուին հիմնեց տպարան և տպարանի գործը դիւրացնելու համար՝ շինեց յատուկ թղթատուն Եւրոպայից վարպետներ բերելով. իւր գործարանի արտադրած թղթովը տպեց իւր կարգաւորած Տօնացոյցը, և մի քանի իւր հեղինակած գրքեր ու Սաղմոսը:

Սիմէօն կաթուղիկոս այս մեծագործութիւնները անում էր այնպիսի ժամանակ, երբ ոչ մի ապահովութիւն չկար, և ինքն այդ ժամանակը նկարագրում է ըստ այսմ. «Արդ լայ զգլուխ կաթուղիկոսին, որ յայսոլիսում ժամանակի պատահի, որպէս ասա, որ գրեմն, ամբոխեալ մուօք և թշուառական կենօք» (Ջամբռ եր. 59):

Այսպիսի աննախանձելի վիճակի մէջ Սիմէօն դեռ հաստ կոչուելու արժանի մեծագործութիւններ կատարեց: Վրաց Հերակլ Թագաւորի կրկնակի յարձակմանց ժամանակ (1765 և 1769) երևանայ սիրող Հիւսէյին - Ալի—Խանի կողմից հաշտութեան միջնորդ կարգուելով, երկիրը ազատեց աւերածութեան աւեր-

մունքից։ 1779 Թուին, երբ Սիմէօն կաթուղիկոս տկարութեան պատճառով ամառնային տօթ եղանակին գնացել էր Նիգ գաւառը ապահովութեան, վրաց Հերակլ Թագաւորը նորից յարձակուեց Երևանայ խանութեան վերայ։ Ի յարգանս Սիմէօն կաթուղիկոսի միայն էջմիածնին և վաղարշապատ գիւղին խնայելով, մնացեալ գիւղօրայքը ասպատակեց, աւերեց և ժողովրդին վրատան տարագիր անելուց յետոյ՝ պաշարեց նաև Երևան քաղաքը։

Երևանայ երիտմեայ պաշարման ժամանակ ցաւագար Հայրապետը պարտաւորեալ եղաւ բացօթեայ վրայ բանակի մէջ մնալու՝ Երևանայ խանի կողմից հաշտութիւն խօսելու համար, և թէև հաշտութիւն չկոխացաւ վրաց առաջարկած պայմանների խստութեանց պատճառով, բայց վերահաս ձմեռան համար Հերակլը վերցրեց պաշարումն և ժողովրդեան ու երկրի մնայորդն ևս աւարեալ՝ գնաց Վրաստան։

Որովհետև միայն էջմիածինն ու վաղարշապատ գիւղն էին շէն մնացել, Սիմէօն մայրագահրաքար՝ որոց հարկաւոր էր անուղղ և սերմանիք ստանալ, իսկ ինքն ասատիկ նեղուելով հիւանդութիւնից՝ 1779 Թուի Նոյեմբեր ամսից մինչև մայս և 1780 Թուի Յուլիսի 26 ին, վարդավառի կիւրակէ օրը կնքեց իւր երկրաւոր բազմարդիւն կեանքը և Թաղուեց Ս. Գայիանէի վանքի գաւթում՝ ձախ կողմը, նախ քան իւր մնհը, էջմիածինը երկար ժամանակ այնպիսի արհաւրալից ժամանակին անտերունչ չմնալու համար, յանձնարարելով կաթուղիկոս ընտրել էջմիածնի, ի մանկութենէ հետէ բազմարդիւն միաբան՝ Կարնեցի Ղուկաս արքեպիսկոպոսին, որ Զմիւռնիայ 12 ամեայ բազմարդիւն առաջնորդութիւնից վերադարձած լինելով՝ մեծ յարգի և պատուի մէջ էր Սիմէօնի մօտ*)։

## ԳԼՈՒԽ Թ.

Ս էջմիածնի միաբանական ժողովով և Երևանայ մեծամեծների հաճութեամբ կաթուղիկոս ընտրուեց Ղուկաս Կարնեցի, որ և

(*) Ձիշտ ակարան «Մեծ Մաշտոց»-ին Օծման Կաթուղիկոսի, Հեռնադրութեան Եպիսկոպոսի և Օրհնութեան սուրբ Միւռոնի, գրեալ Հեռամբ Եփրեմ վարդապետի (յետոյ կաթուղիկոս)։ Տես Արարատ 1875 թվի, երես 333—340։

*սուրբ օծումն ընդունեաց Սիմէօնի մահուան 7րդ օրը*)։ Դուկասի*

(*) Բարկիշատակ Ղուկաս կաթուղիկոսի վերայ զանազան տարապայմանճ կարծիքներ կան։ Մ. Վ. Մուրատեան իւր եկեղեցական պատմութեան մէջ գրումէ. «Ղուկասու վերայ կասկածճ կրծագի էջմիածնի միաբանից մէջ, որպէս թէ իւր աշակերտակից Թէքիրդաղցի Սարգիս վարդապետի հետամտութեամբ կամի Հայաստանեայց եկեղեցին միացնել Հռովմայ եկեղեցւոյն հետ։ Այս կասկածը երթալով ստոյգ կերպարանք կառնու, ուստի և Ղուկաս սաստիկ կրճոշտանգուի էջմիածնի միաբաններէն և կաքսորուի, սակայն ձեռնտուութեամբ Վրաց Հերակլ կայսեր կազատի և գաղտագնաց կըփախչի ի Տփղիս և անտի յԵւրոպա»։ «Ղուկասի փախստենէն և մահէն ցկնի»։ . . . . (եր. 592)։

Այս անհեթեթ սխալման մէջ է ընկել Մ. Վ. Մուրատեան՝ Մխիթարեան ուխտի միաբան Հ. Ինճնատիոս Վ. Փափազեանի «Պատմութիւն եկեղեցական» գրքի Ղուկասին վերաբերեալ պատմական հատուածից միայն՝ յանգէտս Սարգիս Թէքիրդաղցու վերաբերեալները Ղուկասին վերագրելով։ Ահա այդ հատուածը. «Էր սա (Ղուկաս) յաշակերտութենէ Յարութիւն արքեպիսկոպոսի Բասենցւոյ, և ի հմուտ էր ուղղափառ ճշմարտութեան ուսեալ ի վարդապետէ իւրմէ, աշակերտակից նորին Սարգիս վարդապետ Թէքիրդաղցի գնաց առ նա ի գտանել հնարս միաբանութեան ազգին Հայոց ընդ եկեղեցւոյն Հռովմայ. բայց ի հակառակասիրութենէ միաբանից ոմանց էջմիածնի չկարաց ի լրումն ածել զիշձս սրտին, այլ մնտնեցաւ ի ձեռս նոցա, և խոշտանգեալ պէս պէս չարչարանօք և աքսորանօք զամս հինգ, ապա ձեռնտուութեամբ Հերակլի արքային Վրաց գաղտագնաց փախստեամբ գերծաւ ի Տփղիս, և անտի յԵւրոպա։ Առ նովին ժամանակաւ զնոյն անցս չարչարանաց և մահուան կրեաց և Տէր Սահակ երէց Ախալցխացի, որպէս գրէ նա ինքն Սարգիս վարդապետ Թէքիրդաղցի» (եր. 936—937)։

Մ. Վ. Մուրատեանի այս անհեթեթ սխալը հերքել են արդէն Պ. Գալուստ Չիլմազեանն (Արարատ 1875 ամի եր. 60—63 և 93—96) և Ներսէսի Վարդիկ Պատկանեան (Արարատ 1875 ամի եր. 173—175)։

—Սիմէօնի ժամանակով Կ. Պօլսոյ փոխանորդութեան թեկնածու Արրահամ արքեպիսկոպոս Աստապատցի Ագուլեաց Ս. Թոմայի Առաքելոյ վանքի մի ձեռագիր աւետարանի մէջ 1798 թուին համառօտութեամբ Աղա Մահմմատ խանի արշաւանքը, Ղուկաս կաթուղիկոսի համար նորա մահից երկու տարի յառաջ գրելով. «Ընդառաջ նորա (եղբօր Աղա-Մահմատ խանի՝ Ալի-Ղուլի խանի) եկն աստուածապատիւ Հայրապետն ամենայն Հայոց Տէր Ղուկաս երջանիկ կաթուղիկոսն Ս. Ամոսոյն էջմիածնի իբրև քաջ հովիւ հոգւոց դնելով զանձն իւր ի վերայ հօտին և հարսին հոգևորի» (տես Արարատ 1876 ամի եր. 14—16)։ Բացի բազմաթիւ և նշանաւոր չինութիւններից, որ Ղուկաս կաթուղիկոս կատարել է մինչև իւր մահուան օրը,

*ընտրութեամբ դժգոհ մնացին կաթուղիկոսութեան թեկնածու Բաւենցի Յարութիւն արքեպիսկոպոս, որ գնաց Եւրոպա և Տրիեստում*

---

*որոնք ապացուցանումեն, որ նա երբէք կասկածուած և արտաքսուած չէ եղել Էջմիածնի միաբաններից՝ յիշենք որ նա թաղուած է Գայիանէի վանքի գաւթում ձախ կողմը և մարմարոնեայ տապանաքարի վերայ գրուած է.*

*« Ցարկ դամբարանիս է վեհին մեծի,*
*Տեառն Ղուկասու կաթուղիկոսի.*
*Ինիկ գաւառաւ էր սա Կարնեցի,*
*Հանդարտակենցաղ և ջանիւք բարի.*
*Թէպէտ դիպեցաւ դառն ամանակի,*
*Պատեցեալ վշտօք ըստ փողոյն մեծի.*
*Ա՛յլ յօրէ կոչման ետ իսկ ի մոռի*
*Շ.քեղաղարդել զգահն հրաշալի,*
*Որ և ետ ծաղկել կարի սիրալի*
*Զմէջ Տաճարին Միածնաիջի,*
*Նաև նորոգել ետ շուրջանակի*
*Շինեալ և զայլ շէնս՝ որք են իսկ յայտնի.*
*Ապա ընկալեալ զվախճան բարի,*
*Դիմեաց առ քրիստոս յոյսն ամենի,*
*Ցորմէ ընկալցի զվարձս բարի,*
*Եւ յարքայութեան նորին հրճուեսցի »,*

*« Ամիսս ութեցաւ յամի Տեառն 1799, ի դեկտեմբերի 29 ի տօնի որգւոցն Սրոտման » : ( Տես և Շահ - Խաթունեանի Ստոր. կաթուղ. Էջմ. հատ. Ա. եր. 279—280 ): Առ այս՝ այսքան:*

*Հանդուցեալ Մսեր Մափիսարոս Մսերեան իւր՝ « Պատմութիւն կաթուղիկոսացն Էջմիածնի » երկասիրութեան մէջ դրատատելով Ղուկասին ըստ այմ. « Էր Ղուկաս այր անձնեայ, փառացի, վայելչադէմ, ծանրաբարոյ, քաղցր՝ ի կենակցութեան և վարժ ի գրաւել զսիրտ այլոց » ( տես եր. 10 ), ունկն մատուցանելով լերանացի խօսք ու զրոյցներին՝ համարումէ նորան ընչաքաղց, ուսումնատեաց և ապերախտ: Ընչաքաղց՝ որովհետև, որպէս թէ նա բանիւուն նուիրակներ ուղարկելով զանազան կողմեր՝ ոսկի, արծաթ և պատուական քարեր էր կուտում Էջմիածնի գանձարանի մէջ. ուսումնատեաց՝ որովհետև, որպէս թէ, նա թղթաշինութեան և տպարանի վերայ հոգս չէ ունեցել, և բանիւուն մարդոց հեռացրել է Էջմիածնից նուիրակութեան պատրուակով. ապերախտ՝ որովհետև, որպէս թէ, իւր կաթուղիկոսացման պատճառ Սահակ եպիսկոպոս Գեղամացուն նուիրակ է ուղարկել Ն. Պօղիս և Զմիւռնիա Պ. Ա. Երիցեան և, հետևելով Հանգ. Մագ. Մ. Մսերեանին՝ Ղուկասին անուս և ուսումնատեաց է անուանում. « Նիւթեր Ներսէս Ե - ի կենսագրութեան համար » . եր. 21: Սակայն նոյն երեսում Ներսիսի Ցուցակ ծառայականից*

վախճանուէ 1776 թուին*), և կ. Պօլսոյ պատրիարք կաղզուանցի Ձաքարիա եպիսկոպոս, որ լսելով թէ Սիմէօն կաթողիկոսի յանձնարարութեամբ է ընտրուել Ղուկաս՝ Սիմէօնի կարգաւորած Տօնացոյցը հաւաքելով եկեղեցիներից՝ այրեց, հին Տօնացոյցը նորից տպագրեց ու ցրուեց եկեղեցիների վերայ և պատուիրեց Ղուկասի անունը չյիշել եկեղեցիներում. սակայն Ղուկաս սիրով և

---

*Հատուածը ընդհակառակն է ապացուցանում, նայելով ժամանակին. ահա. «Եւ զամս 13՝ այն է մինչև ցմեռասան ամն պատրիարքութեան երանելի Հայրապետին մերոյ Տ. Ղուկասու յարատևեալ ի մէջ ուսումնական աշակերտութեան՝ հմտացեալ է եկեղեցական ուսմանց և Աստուածաշունչ գրոց ևս և արհեստից քերականութեան և ճարտասանութեան իբրև յառաջին աստիճանի ի մէջ ամենայն ազգիս Հայոց ևս և Աստուածաբանական կամ՝ տրամաբանական գիտութեանց ոչ նուազ քան զդատաներեցեալն յազգի մերում»։

Ըստ իս՝ ընդհակառակն էջմիածնի դանձարանը հարստացնելը՝ ապացոյց է Ղուկասի տնտեսագիտութեանը. բանիբուն անձանց նուիրակ կարգելը՝ ապացոյց է Ղուկասի իմաստուն վարչութեանը. իսկ եթէ Տպարանը և թղթաշինութեան գործարանը հարկաւոր արդիւնքը չեն արտադրել, այդ ոչ թէ Ղուկասի ուսումնատենչութիւնից է եղել, այլ ժամանակի բերմունքից, և ահա ինչ է գրում՝ այս մասին Հանգուցեալ Ծովհաննէս եպիսկոպոս Շահ-Խաթունեան. «Այս երկու գործարանք՝ պարծանք աթոռոյն և ազգին, կային ի հաստատութեան և ի շարունակ գործադրութեան՝ ի ժամանակի անդ կաթողիկոսութեան և փափագելի կենդանութեան նորին Սիմէօնի Երևանցւոյ. այլ զկնի վախճանի նորա՝ ի պատճառս յարուցման պատերազմաց ի զանազան նահանգակալ իշխողաց ի վերայ միմեանց ի դաշտի աստ Արարատեան՝ շուրջ զայսու պատրիարքական աթոռով, խանգարեցան մեծ մասամբ՝ և գլխովին իսկ գործարանն թղթաշինութեան, զի գոլով արտաքոյ պարսպին, երկաթեայ և պղնձեայ գործիք նորա յափշտակեալ ի զօրաց ասպատակողացն՝ ցիր և ցան եղեն ի հեռաւոր տեղիս, մինչ զի և զձուլեալ տառսն տպարանին ի հեռաւոր քաղաքաց գնեալ ի գերչացն Հայազգի անձինք՝ վերադարձուցանէին յԱթոռ այսր զկնի պատերազմաց» . . . (Ստոր. Կաթ. Էջմ. Հատ. Ա. եր. 99—100)։ Բաւական է ի նկատի ունենալ, որ Սիմէօն կաթողիկոսի Պարտավճարի Բ, մասը Վրաց Հերակլ Թագաւորի 1779 թուին ասպատակութեան պատճառով Ղուկասի կաթողիկոսութեան երրորդ տարին տպուեց. (Պարտավճ. վերջաբան 377—383)։

Ուրեմն Տպարանի և գլխաւորապէս թղթաշինութեան գործարանի խանգարուիլը Ղուկասի անուսումնասիրութիւնից չէ եղել, այլ ժամանակի ձախող բերմունքից։

(*) Արարատ 1875 եր. 173—175։

խաղաղութեամբ այս խնդրոյս վախճան տալու համար կաթուղիկոսական օծումն ընդունելուց յետոյ բաւական ժամանակ եկեղեցւոյ կաթուղիկոսական ախոռի վերայ չընտրեց տպատելով Կ. Պոլսեցւոց և նոցա պատրիարքարանի հաւանութիւնը և տուլթանից ստանալիք հրովարտակին։ Զաքարիա պատրիարք և Կ. Պոլսեցիք Դաւկասի այս զիջումը տեսնելով՝ շուտով հաւանութեան թուղթ ստորագրեցին և տուլթանի հրովարտակը ստացան և ուղարկեցին, իսկ Զաքարիա պատրիարք կարգադրեց եկեղեցիներում յիշել Դաւկասի անունը և գործադրել Սիմէօնի ծանոցոյցը։

Զաքարիա պատրիարք Կաղզուանցի՝ Հայաստանեայց եկեղեցւոյ կարգաց նախանձախնդրութեամբ սկսեց ստոյգ հալածանք ընդդէմ կաթոլիկամիտ Հայոց, որոնք ազատուելու համար ղրկարտեցին՝ որպէս թէ նա գերմանացւոց դեսպանին յատկացեալ մի թուղթը բաց է արել. այսպիսով Զաքարիան պաշտօնանկ եղաւ և գնաց Բրուսա, իսկ Յովհաննէս Համադանցի կարգուելով պատրիարք, կաթոլիկ Հայոց դէմ հալածանքը աւելի և աւելի սաստկացրեց, յետ նոցա մահուան անգամ նշանակելու համար՝ բժշկապետ մի նոր սանդխաձև գաւազանով թագել հրամայելով։ Յովհաննէս Համադանցի այս խնդրութեան համար տասն ամեայ պատրիարքութիւնից յետոյ 1782 Մարտ ամսին պաշտօնանկ եղաւ և նորից պատրիարքութեան հրաւիրուեց Զաքարիա Կաղզուանցին, որ գազարեցրեց հալածանքը ընդդէմ կաթոլիկամիտների, ժողով գումարեց պատրիարքարանում և որոշեց որ Հայք Հռոմէական Հայոց հետ իննամութիւն և ազգականութիւն չանեն, և այսպէս մերժելով նոցա Հայոց հետ հաղորդակցութիւնից՝ չանգիստ թոյլ տուեց նոցա հեռանալ Հայոց եկեղեցիներից և լատինաց եկեղեցիները յաճախել*)։

Ինչպէս Աղուանից նոյնպէս և Սոյ կաթուղիկոսները շատ անգամ յաջորդում էին մէկը մէսին ոչ թէ ընտրութեամբ, այլ ազգակցութեամբ։ Այսպէս Սոյ կաթուղիկոսութիւնը յարատևում էր Ալթապահեան ցեղի մէջ և 1784 թուին Սոյ եպիսկոպոս Ալթապահեան թաղնաւորուելով տեղւոյն այլազգի իշխանից՝ յաջորդեց Թէոփանոս Սաեցի, որ Կ. Պոլսոյ Ս. Անտուածածնի մայր

(*) Պատմ. Հայոց Ա. Պէրպէրեան գլ. Ա.

եկեղեցում կաթուղիկոսական օծումն ընդունելուց յետոյ շուտով գնաց Սիս։

Ղուկաս կաթուղիկոս սիրով բոլորի սիրտը և շահելուց յետոյ իւր, էջմիածնի միաբանից, Կ. Պոլսոյ պատրիարքի և տեղւոյն բոլոր հոգևորական և աշխարհական նշանաւոր անձանց ստորագրութեամբ 1783 թուին տահմանեց կաթուղիկոսին խորհրդակից մի ժողով՝ որի անդամները պէտք է լինէին էջմիածնի արքեպիսկոպոսներն ու եպիսկոպոսները՝ վեց անձինքներից ոչ պակաս*)։

Ղուկաս քաջ իսկ իմանալով որ նուիրակների պարտքը ոչ միայն ժողովրդի նուէրները հաւաքելն ու էջմիածին հասցնելն է, այլ ժողովրդին հոգևորապէս մխիթարելն ու իրանց առաքինի վարքով՝ էջմիածնի Մայր Աթոռի հետ կապելն է, էջմիածնի ամենանշանաւոր, և գիտութեամբ ու առաքինի վարքով հռչակեալ միաբաններին նուիրակ ուղարկէց զանազան կողմեր, և այսպէս թէ ժողովրդին շահեց և թէ Մայր Աթոռը, հարստացնելով գանձարանը, որով զանազան շինութիւններ արեց, որպիսիք են եկեղեցու հարաւային կողմը գանուած խարտեաղ քարերով երկյարկ շինութիւնը համբարանոցին յատակացեալ՝ Վեհարանի անկիւնից սկսած մինչև փոնատան անկիւնը, եկեղեցու՝ ի ներքուստ ծաղկեցնելը, և արտաքուստ՝ որմերի հնացած չորս կողք քարեր փոխելը։

Ղուկաս նշանաւոր անձանց, որպիսի են Սահակ Գեղամացի՝ Կ. Պոլսոյ, Պետրոս Քերթամեան՝ Եւդոկիայի, Եփրեմ՝ Երևանցի՝ Հընդկաստանի նուիրակ կարգելուց յետոյ, բարեկարգեց նաև էջմիածնի անտեսական կառավարութիւնը. սակայն Աղուանից կաթուղիկոսութեան և Խամսայի մելիքների վէճերը, որ ոչ միայն չէին դադարել այլ աւելի և աւելի սուր ընաւորութիւն էին ստացել՝ նորա հոգացողութեան առարկան դարձան։ Խամսայի մելիքները վստահացած Ռուսաստանի առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոսի Ազուեան երկրների կառավարիչ իշխան Գրիգոր Պոտեմկենի կողմից արած առատ խոստումներին՝ ժողովուրդին գանգատար՝ Աղուանից Յովհաննէս կաթուղիկոսի մօտ, խորհուրդ տրին ապստամբուել Շուշւոյ Իբրահիմ խանից և ելատերինէ Բ. կայսերուհուց պաշտպանութիւն խնդրելու համար մի գիր և՛ գրեցին ու յանձնեցին Գրիգոր

(*) Մսեր Մադիստ. Մսերեան. Պատմ. Կաթղկ. Էջմ. եր. 9—10։

անուն մի ժիր մարդու, որ գաւազանի մէջ ամփոփած այդ դիրը՝ ծպտեալ ազքատի կերպարանքով՝ հասյնելով Թիֆլիզ՝ պէտք է կայսերուհուն ուղարկէր։

Յովհաննէս կաթուղիկոսի եղբայր Ալլահ-Վուլի բէկը այս խորհուրդը յայտնեց Իրրահիմ խանին, որ խոստանալով Իսրայէլին կաթուղիկոսացնել Գանձասարում՝ առաջարկեց նորան կալանաւորել Թղթաւոր Վրիպորին։ Իսրայէլը կատարեց խանի առաջարկութիւնը և Գանձակում բռնելով Թղթաւորին՝ անձամբ տարաւ Իրրահիմ խանի մօտ։ Մելիքները Իրրահիմ խանի վրէժխնդրութիւնից ազատուելու համար Գանձակ փախան, խանի վրէժխնդրութեան զոհ միայն Գանձասարի վանքը և Յովհաննէս կաթուղիկոսը մնացին, որ 1786 թուին առանց հարցուփորձի, մորակի հարուածներով տակ աւանդեց հոգին, իսկ վանքը իւր կալուածներով սւսար և կողոպուտ դարձաւ։

Յովհաննէս կաթուղիկոսի եղբայր Սարգիս արքեպիսկոպոսը Գանձասարու մնացեալ գոյքերը ամուր տեղեր պահելուց յետոյ, 1792 թուին իւր եղբայրների և Դանիել եպիսկոպոսի հետ փախաւ Գանձակ, և նոյն թուի Դեկտեմբերի 8-ին Գանձակում, տեղւոյն Չաւատ խանի հրամանով առանց էջմիածնի ընդհանրական հայրապետի կանխագոյն հաճութեան ու հաւանութեան, ինքնակոչ և գաւազան Իսրայէլին հակառակ՝ կաթուղիկոս օծուեց։

Սարգիս կաթուղիկոսացեալը տեսնելով Չաւատ խանի թուլութիւնը և խռովութեանց հետզհետէ սաստկանալը 1798 թուին Գանձասարից իւր հետ փախստական մելիքների և իւր եղբօրորդի Նորընծայ աբեղայ Բաղդասարի հետ գնաց Թիֆլիզ։ Վրաց Հերակլ թագաւորը սիրով ընդունեց Սարգսին և նորա հետ եղած ներին, և խնամքը, որ ինքն պիտի ցոյց տար՝ իւր մեհուան պատճառով ցոյց տուեց իւր ժառանգն ու յաջորդ Գէորգ թագաւորը, Սարգսի ցանկութեան համեմատ խնդրելով Ղուկաս կաթուղիկոսից նորան Հաղպատու առաջնորդ կարգել։

Ղուկաս զայրացած լինելով, որ Սարգիս ինքնագլուխ է կաթուղիկոսացել, սկզբում չկամեցաւ կատարել Գէորգ թագաւորի խնդիրը, բայց երբ նա սպառնացաւ էջմիածնի վանականներին չրիստոնել Փամիկակու ձորն անցնել, զիջաւ։ Սարգսին կանչեց էջմիածին, յանդիմանեց նորա ինքնագլուխ կաթուղիկոսանալուն

համար և միայն արքեպիսկոպոսի տիտղոսով ուղարկեց Հայքաստ։ Դուկաս կաթուղիկոս պարտաւորուեց Գէորգ Թագաւորի հրովարտակին համեմատ Հայքաստու վանահայրութեան հետ և վրաստանի ու Կախեթու առաջնորդութեան իրաւունքն ևս յանձնել Սարգսին, այն պայմանաւ՝ որ Սարգիս վրայ արքունեաց միջոցաւ իւր թեմի և վանքի հաշիւը ներկայացնէ էջմիածնին։ Սարգիս և իւր հետ եղած մելիքները Գէորգ Թագաւորի մարդասիրութիւնը վայելեցին՝ մինչև որ Ռուսները տիրապետեցին Թիֆլիզին [1]։

Դուկաս իւր հայրապետութեան բազմալրգով ժամանակին հայ աղջկունքը շահի եղբօր կանանոցի համար եղած աղջկաժողովից ազատել յանկարծ՝ թոյլ տուեց մեծի պահոց մէջ ուխտ տարեկանից վեր բոլոր աղջիկներին ևս պահել [2] և 1795 թուին Աղա-Մահմատ-խանի ասպատակութեան ժամանակ իբրև անձնապիր հովիւ գնաց նորա բանակը և արժանաւոր ուխտանկագին ընծաներ, ու չափաղանց դրամ ներկայացնելով Աղա-Մահմատ-խանին ու նորա դրան մարդոցը, շահեց նորա սիրտը չքնաղել էջմիածնին [3]։

Թէ և էջմիածինը և շրջակայքը Դուկասի նախահոգութեան պատճառով ազատուցին ասպատակութիւնից, սակայն առ ահի Աղա-Մահմատ-խանի՝ կանխաւ էջմիածնի կայքերից 20 բեռ բայազէտ և 21 բեռ Թիֆլիզ ուղարկուած լինելով, Թիֆլիզ ուղարկուածը խանի ձեռքն ընկաւ, երբ նա 1795 թուին Սեպտեմբերի 11-ին Թիֆլիզին տիրեց ու ասպատակեց [4]։

Դուկաս իբրև իւր հօտին համար հոգացող հայր, շնորհաւորելով Ռուսաց Պօղոս Ա. կայսեր գահակալութիւնը, խնդրեց նորա բարեհաճութիւնը դէպ ի Հայոց ազգը, ճանաչելով էջմիածնի իրաւասութիւնը նաև Ռուսահայոց վերայ. կայսրը յարգեց հայրապե-

---

(1) Բաղդասար Մետրապօլիտ Հասան-Ջալալեանցի Համառօտ կենսագրութիւն. (Փորձ ազգային և գրականական Հանդէս. Տարի Դ. № V. Մայիս 1880 ամի, եր. 131—164։

(2) Պատմ. Կաթ. Էջմիածն. Մաշտ. Մագ. եր. 9։

(3) Ցիշատ. տես Արարատ 1076 եր. 14—16։

(4) Ցիշատ. Արարատ 1876. եր. 14—16 և 1875՝ եր. 93։ Պ. Ա. Ենիցեան Թիֆլիզ տարուած էջմիածնի գոյքը արժէքի 200000 թուման (600000 րբլ.) է համարում. Նիւթեր Ներսէս Ե-ի կենսագրութեան համար. եր. 7. ծանօթ։

ակի զգացմունքը և խնդիրը 1798 թուի Փետրուարին տուած հրովարտակով*):

Ղուկասի կաթուղիկոսութեան վերջին տարին Դամասկոսի կուսակալը Նապոլիոն Ա.-նոյ Պաղեստինին հասցրած վնասների տուգանքը ուրիշ քրիստոնեաների հետ Երուսաղէմայ Պետրոս պատրիարքից և իսուիս պահանջուեն համար՝ պատճառ եղաւ նորա վաղահաս մահուան, որ յառաջացել էր սրտնեղութիւնից: (Բայց ոմանք և պնդումն որ, երբ Պետրոս Ս. Յարութեան տաճարում մի շինութիւն անելու համար մեծ ունենալով Յունաց հետ կուսակալին է դիմել, յոյնք թունաւորել են նորան): Պետրոս վախճանուելով, թաղուեց Յոպպէի Հայոց եկեղեցում:

Ղուկաս իր բազմավրդով ժամանակին արժանաւորութեամբ՝ մնա 20 տարի հայրապետական իշխանութիւն վարելուց յետոյ 1799 թուի Դեկտեմբերի 27 ին երկարատև ծանր հիւանդութիւնից յետոյ վախճանուեց և թաղուեց Ս. Գայիանէի վանքի գաւթում, մայր տաճարի և վանքի մէջ մեծամեծ շինութիւններ կատարելուց յետոյ՝ մի հարիւր հազար թուման (300,000 մանէթ) և պատրաստի գրամ թողնելով զանձարանում **):

---

## ԳԼ. Ժ.

Թիֆլիզի մեծազգի Արղութեան Յովհէի արքեպիսկոպոսը 1773 թուին Սիմէոն կաթուղիկոսից նշանակուելով Ռուսաստանի վիճակաւոր, յընթացս երկարամեայ այս պաշտօնավարութեան Ռուսոց արքունեաց և Հայ հասարակութեան միջև խրև յարգելի և հաւատարմութեան արժանի անձն յարաբերութեանց միջնորդ դարձաւ:

Յովհէի արքեպիսկոպոսի յորդորմամբ Խրիմու Հայերը մնա 20,000 անձինք 1777--1778 թուականներին գաղթեցին Ազովեան դաշտերը և երկու տարի մեծամեծ նեղութիւններով վրանաբնակ լինելուց յետոյ, Դօն գետի հովտում քնակութիւն հաստատեցին, ուր շինեցին նոր — Նախիջևան քաղաքը և մի քանի գիւղեր և 1779 թուի Նոյեմբերի 14 ին հրովարտակով զանազան

---

(*) Պատմ. կաթ. Էջմ. դպրց Մս. Մագ. եր. 163—165:

(**) Արարատ 1875 եր. 93:

աւանձնաշնորհութեանց հետ իրաւունք սուրբ ազգային սովորութեամբ ու մայրենի լեզուով, մի ուրիշ պաշտօնեի ներկայութեամբ, վարել իրանց գաւառական և առանձին գործերը, առ այս ընտրուած անձանց ձեռքով, յատկացեալ իրաւարանում՝ որ Մագիստրատ էր կոչւում:

Ուրախացրին արքունիքը Յովսէփ արքեպիսկոպոսի թախանձանօք վաղուց երկնումէր Անդրկովկասը և յատկապէս Հայաստանը ազատել ինքնագլուխ սիրապետող մահմետական խաների բռնութիւնից, ուսաի Աղուեան երկիրների և Ատրպատական կուսակալ իշխան Գրիգոր Պօտեմկին հետամուտ էր լինում ճիշտ և մանրամասն տեղեկութիւններ ունենալ Հայաստանի վերայ: Այս մասին քերանացի լուրերով չբաւականացած՝ Կովկասին ծանօթ բժիշկ Ե. յներգսին ուղարկեց Անդրկովկաս երկիրը լաւ ուսումնասիրելու:

Բժիշկ Ե. յներգսը Կովկաս գալով իրան եղած յանձնարարութիւնը վսեռանակ լուսեցոյն կատարելու, Կովկասի ազատութիւնը մահմետական բռնութիւնից որպէս մի կատարուած գործ քարոզելով՝ սկսեց հրաւէր կարգալ Հայերին դէպ ի Ս. յրարատեան գաշտը, իբրև կենսարօնատեղի Հայոց: Բժիշկը ոգևորութիւն և եռանդն բորբոքելով՝ կազմեց Հայերի, մելիքների և առհասարակ երկրի հանգամանքի նկարագիրը և մանրամասնաբար տեղեկագրելով ներկայացրեց իշխան Պօտեմկինին: Բռնակալ խաները տեսնելով Հայոց արտաքոյ կարգի եռանդը, աւելի և սաստկութեամբ սկսեցին նեղել և տանջել նոցա:

Հայերը այս նեղութեանց մէջ չբոլսահատուելին, որովհետև Յովսէփ արքեպիսկոպոսը իշխան Գրիգոր Պօտեմկինի խոստումներով յուսադրուած՝ յուսադրում էր տառապող Հայերին՝ թէ, նոքա շուտով ազատուելով մահմետականների բռնութիւնից և Պարսաստանի հետ միասին Ռուսաստանի խնամակալութեան տակ ազատութիւն կը վայելեն: Հնդկաստանի Հայք և նոքա ոգևորուած Յովսէփ արքեպիսկոպոսի տուած յոյսերով՝ իւրաքանչիւրը իւր կարեւոր չափ աշխատութիւնը նպաստամատոյց լինել, ուսաի ոմն Յակոբ Շահամիրեան «Որոգայթ փառաց» վերնագրով մի գիրք համբագրեց սահմանելով կանոնները՝ որով պէտք է Հայերը և Պարսիք միմեանց հետ յարաբերութիւն ունենային. խնդրելով Յովսէփ արքեպիսկոպոսին այս գրքից մի օրինակ նկատարինէ Բ. կայսերու-

հուն ներկայացնել և մի օրինակ՝ Վրաց Հերակլ թագաւորին։ Հնգկարնակ Յովսէփեան էմին և Շամիրխան միլիոնատէր Հայերը Յովսէփ արքեպիսկոպոսի միջոցաւ առաջարկումէին իրանց միլիոնները, առանց արիւնհեղութեան Պարսից և Տաճկաց տէրութիւններից գնել Հայաստանը և յանձնել Ռուսաց կայսրութեանը։

Իշխան Գրիգոր Պոտեմկին Ղարաբաղի մելիքներից ստացած դոհայտարիչ տեղեկութիւնները ի նկատի ունենալով՝ մի զօրապետ ուղարկեց Վրաց Հերակլ թագաւորի մօտ՝ որ նորա հետ միասին պաշտօնական անուն Ղարաբաղու Իբրահիմ խանին։ ամենայն Հայոց Ղուկաս և Աղուանից Յովհաննէս կաթուղիկոսները որոշեցին առանձին տեսակցութիւն ունենալ, հարկաւոր պաշար հայթայթելու Ռուս զօրքերին, երբ նորա Հայաստան գալու լինին։

Ղարաբաղի Իբրահիմ-խանին պաշտօնական անելու գործողութիւն պիտի կատարուէր 1784 թուին, բայց յետաձգուեց՝ իսկ խանը իրապէս լինելով Հայերի մտադրութեանը, ոկսեց Շուշին աւելի ևս ամրացնել, սաստիկ նեղել և տանջել Հայերին։ Ահա այս ժամանակից ոկսեալ Իբրահիմ-խանը կասկածի գնալով՝ իրան գործիք շինեց Աղուանից Յովհաննէս կաթուղիկոսի եղբօրը, և նորա դաւաճանութեամբ խմանալով մելիքների ու կաթուղիկոսի ցանկութիւնը, յանձնարարեց Գանձակում եղող ինքնակոչ Խարայէլ կաթուղիկոսին կալանաւորել թղթատարին, որին հետևեց Գանձասարու աւերումը, Յովհաննէս կաթուղիկոսի գանահալ լինելով մահը և մելիքների՝ Սարգիս արքեպիսկոպոսի հետ Վրաց Հերակլ թագաւորին ապաւինելով՝ Հաղբատու վանքում ապաստանարան գտնելը։

Թէև Ռուսք զբաղուած էին Տաճկաց և Շուետացւոց պատերազմներով, բայց Յովսէփ արքեպիսկոպոս քաջալերուած իշխան Գրիգոր պօտեմկինի խոստումներով՝ 1790 թուին գրեց մի դաշնագիր՝ 19 յօդուածներով՝ որով Հայք Ռուսաց կայսրութեան տակ՝ Ռուսաց հետ պէտք է յարաբերութիւն ունենային։ Այդ դաշնագրութեան Ա, Բ, և Գ. յօդուածները *) վերաբերումեն

(*) «Հայերի մասնակցութիւնը Ռուսաստանի Անդրկովկասում արած տիրապետութիւնների մէջ»։ Գործ Ա. Երիցեանց տես. «Փորձ գրականական և ազգային հանդէս. Բ. տարի № 1։ եր. 382։ Յովսէփ Արղութեանի մասին

*կրօնական յարաբերութեանց։ Այդ յօդուածներով Ա. Ռուսք և Հայք իբրև քրիստոնեայ եղբարք միմեանց պիտի սիրէին, և խորութիւն չը պէտք դնէին ոչ Ռուսք Հայոց եկեղեցւոյ օրինաց և ոչ Հայք՝ Ռուսաց եկեղեցական օրինաց։*

*Բ. Մի ազգից բաժանուածը իբրև սիրոյ և խաղաղութեան պղտորիչ՝ պիտի չընդունուէր մէս ազգի մէջ։*

*Գ. Տաճիկներից և հեթանոսներից քրիստոնեայ լինել ցանկացողները պէտք է ազատ լինէին ընդունել որ եկեղեցին և կամենային նոքա։*

*Հայք նոյն և վրացիք անսահման հաւատումէին Յովսէփ արքեպիսկոպոսին, տեսնելով այն շնորհները՝ որ վայելումէր նա Ռուսաց արքունիքից, յատկապէս բարեկամութեամբ իշխան Գրիգոր Պօտեմկինի, որ ցանկութիւն ունէր կովկասեան երկրներին կառավարիչ լինել, բայց իր ցանկութեան կատարումն չը տեսաւ 1791 թուին վախճանուեց իմաստ ցաւ Յովսէփ արքեպիսկոպոսի և Ռուսաց օգնութեան սպասող Անդր—Կովկասեան քրիստոնեայ ժողովրդոց։*

*Թէև Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանի նպատակը, որ էր Հայաստանը մահմետական լինքնիշխան խաների բռնութիւնից ազատել, չը յաջողուեց, սակայն իւր վերայ եղած մեծ համարմամբն սկսեց կաթուղիկոսութեան ձգտել, և դեռ ի կենդանութեան Ղուկաս կաթուղիկոսի «էջմիածնի կաթուղիկոսական տեղակալ» տիտղոսը ստանձնեց։ Ինքն Ղուկաս կաթուղիկոսը և նշանաւոր եպիսկոպոսները նկատելով Յովսէփի թշնամական յարաբերութիւնը Պարսից և Տաճկաց հետ, որոնց հպատակ էին Հայերը, չէին կամենում նորա կաթուղիկոսանալը, որովհետև այդպիսով հայ ժողովուրդը տիրող պետութեանց վրիժառութեան զոհ պիտի լինէր։ Յովսէփ Արղութեան անյողդողդ էր իւր նպատակի մէջ և Ղուկաս կաթուղիկոս տեսնելով այս՝ միշտ կրկնելիս է եղել. «Ինձ ինչ մնաց այս աշխարհիս՝ որ քեզ ինչ մնայ, Յովսէփ վարդապետ*)»։*

---

*պատմութիւնը համառօտուած է յատկապէս Պ. Երիցեանի յիշեալ աշխատասիրութիւնից. և Հանգ. Մս. Մագ. Մսերեանի «պատմութիւն կաթուղիկոսաց Էջմիածնի» մատենից։*

(*) «Նիւթեր Ներսէս Ե-ի կենսագրութեան համար». Գործ. Ա. Երիցեանց. արտատպած «Փորձ» ամսագրից 1877 թուին։

Յովսէփ արքեպիսկոպոսը իւր հոմանաւորութեան տակ առնելով Ս. Պետերբուրգում հիմնուած Խալդարեանի տպարանը՝ 1783—1796 թիւը մի քանի կրօնական գրքեր հրատարակեց։ Այս տպարանը Նոր — Նախիջևան փոխադրուեց և վերջապէս Աստրախանում հաստատուեց։ Յովսէփ արքեպիսկոպոս Ռուսաց կոնսիստորեանների կարգով Ռուսաստանում Հայոց մի կոնսիստորիա բաց արեց և 1799 թուի Հոկտեմբերի 28ի բարձրագոյն հրովարտակով՝ 1800 թուին բաց արեց Ս. Պետերբուրգում և Մոսկվայում մի մի Հայոց Հոգևոր Կառավարութիւն։

Դաւիթի մահից յետոյ կաթուղիկոսական ատոռին բացի Յովսէփից, Դանիէլ Սուրմառեցի և Դաւիթ Ենէգլեցի եպիսկոպոսներն էլ էին, և սոցանից ամեն մինը աշխատում էր գրաւել հայրապետական ատոռը յոյս դնելով՝ Յովսէփ՝ իւր բարեկամների, Վրաց Թագաւորի և Ռուսաց վերայ. Դաւիթ՝ միաբանութեան փոքրամասնութեան և Երևանայ Խանի վերայ, իսկ Դանիէլ՝ էջմիածնի միաբանութեան և ազգի վերայ։

Դաւիթի հէնց մահուան օրը կաթուղիկոսական ընտրութեան համար ժողով կայացաւ և երկրորդ օրը ժողովը բարձրը պատուոյ կաթուղիկոսացու ընտրել Կ. Պոլսոյ պատրիարք Սուրմառեցի կամ Եայազէտցի Դանիէլ և Հնդկաստանի ու Աստրախանի նուիրակ Եփրեմ արքեպիսկոպոսներին։ Ուսաի և ընտրութեան թուղթը ստորագրելով՝ էջմիածնի ատոռակալ (անտեռական մասին կառավարիչ) Ղօրղանեան Դաւիթ եպիսկոպոս էնէգլեցու ձեռքով ուղարկեց Կ. Պոլիս։

Ժողովը Դաւիթ էնէգլեցուն դիտմամբ կարգեց հրաւիրակ որ նա միջոց չունենայ Երևանում՝ բնակող իւր եղբօր ու նորա աներ Ազամալեան Մելիք Աբրահամի միջոցաւ՝ Երևանայ խանի օգնութեամբ կաթուղիկոսանալ։

Դեռ Դաւիթ եպիսկոպոս Կարին չէր հասել և ահա Յովսէփ Արղութեանի ազգականները վրաց Գէորգ Ժ. Թագաւորի միջոցաւ սկսեցին ճնշում գործ դնել էջմիածնեցւոց վերայ, որ Յովսէփին անպատճառ կաթուղիկոս ընտրեն։ Գէորգ Թագաւորը սպառնացաւ որ, եթէ Յովսէփ չընտրուի կաթուղիկոս, ժանտախտի պատճառով՝ Թիֆլիզ տարուած Ս. Գեղարդը յետ չի դարձնիլ։ էջմիածնեցիք ճարահատեալ առանձին սուրհանդակով Յովսէփի ընտրութեան համար և հաւանութեան մի թուղթ ուղարկեցին, բայց

առանձինն յայտնելով թէ Յովսէփի մասին հաւանութիւնը առ հարկէ է։ Այս իսկ ժամանակ Յովհաննէս եպիսկոպոս ակնեցի, Ս. Գեղարդը ծածուկ վեր առնելով Թիֆլիզից Ախալցխայի վերայով գաղտ եկաւ հասաւ էջմիածին։

Կաթուղիկոսացու Դանիէլը 1793 թուին Ղուկասից Զմիւռնիոյ առաջնորդ էր նշանակուած, բայց իւր և ժողովրդեան մէջ ծագած խռովութեան պատճառով 1797 թուին թողեց Զմիւռնիան և ըստ յանձնարարութեան Ղուկաս կաթուղիկոսի սկսեց Ռումելիայի նուիրակութիւնը, որ 1799 թուին աւարտած՝ երբ էջմիածին էր վերադառնում՝ Մարտի 11ին Պօլսում Զաքարիա պատրիարքի մահուան և յուղարկաւորութեանը հանդիպեց, ուստի և նոյն Մարտի 15ին ընտրուեց պատրիարք և առաջին գործը եղաւ Սիմէօնի Տօնացուցի նոր տպագրութեամբ ընդհանրացնելը։

Ղորղանեան Դաւիթ եպիսկոպոսը 1800 թուի Մարտի 18ին հասաւ Կ. Պօլիս, բայց կաթուղիկոսական ընտրութիւնը այն տեղ երկարաձգուեց մինչև Ապրիլի 28ը, որվհետև թէ ինքն Դանիէլ ախոյեան ունենալով Յովսէփ Արղութեանին դժուարանում էր ընդունել կաթուղիկոսութիւնը և թէ Կ. Պօլսեցիք չէին կամենում Դանիէլին կաթուղիկոս ընտրելով՝ նոր պատրիարք ընտրելու հոգսի մէջ մնալ, ուստի և Նիկոմիդիոյ առաջնորդ Կապուտիկ կչեցեալ Բարգուղիմէոս եպիսկոպոսին ընտրեցին կաթուղիկոս, և հրաւիրեցին Կ. Պօլիս. բայց նա և այս հրաժարուեց։

Կ. Պօլսոյ Պալատ արուարձանի քարոզիչ Յովհաննէս եպիսկոպոս Զամնշրճեան՝ պատրիարքութեան և Դաւիթ՝ կաթուղիկոսութեան թիւնաճառները, տեսնելով որ Դանիէլի ընտրութեամբ իրանք իրանց նպատակին չեն հասնում՝ էջմիածնի նուիրակ Յեղուսա եպիսկոպոսին սկսեցին խարբալել, գրգռելով՝ որ նա իբրև էջմիածնի բազմաժամանակեայ միաբան՝ եթէ ոչ կաթուղիկոս, գոնէ պատրիարք պէտք է լինէր բայց մինչև անգամ ընտրութեանց ժամանակելու չըհրաւիրուեց։

Գալուստա սկսեց վրդովուել և վրդովեցուցիչ քարոզներով յուզել նաև ժողովրդեանը թէ՝ ինքն իբրև բազմաժամանակեայ միաբան էջմիածնի և ծեր ու արդիւնաւոր եպիսկոպոս արհամարհուած է կաթուղիկոսական ընտրելի չորոշուելովը, մինչդեռ Բարդուղիմէոս եպիսկոպոս, որ աշխարհական կեանք է վարում՝ կաթուղիկոս է ընտրուել։

Հուսկ ուրեմն խռովութիւնը հանդարտեցնելու համար Պանիէլ ըստ էջմիածնի հանրապետութեան ինքն յանձն առաւ կատիճուղիկոսութիւնը, և ըստ ժողովրդեան ցանկութեան հրաւիրակ Դաւիթ եպիսկոպոսին պատրիարք կարգեց, իսկ Զամաշճեան Ցովհաննէս եպիսկոպոս, որ ինքն էր ցանկանում պատրիարք դառնալ, դարձեալ ուրեք խոսքրալել Գալուստ եպիսկոպոսին և նորա յարուցած խռովութիւնից օգտուելով Կ. Պոլսոյ մեծամեծների օգնութեամբ 1800 Մայիսի 19-ին պատրիարքութեան լիազօրութիւնք ստացաւ եղարքրոջից։

Զամաշճեանը պատրիարքական իշխանութեան հաստելուց յետոյ իբրև խռովութեանց գլխաւոր պատճառների՝ Գալուստին Վիճնա՝ իսկ Դանիէլին Տենեսոս կղզին աքսորել տուեց։ և Կ. Պոլսոյ Ռուսական դեսպան Թամարոյի ձեռքով Սուլթանից Ցովհէփ արքեպիսկոպոսի կաթուղիկոսութեան հրովարտակը առանալով՝ Դաւթին յանձնեց էջմիածին տանելու, որով՝ պատրիարքութեան և կաթուղիկոսութեան թեկնածուներին բոլորին ևս հեռացրեց Կ. Պոլսից, և Ցովհէփին հաճոյանալու համար նախնուանդ տոնութեան հակառակ առանց օծմանն ձգելու Ցուլիսի 16-ից հրամայեց եկեղեցիներում յիշել նորա անունը։

Ցովհէփ արքեպիսկոպոս իւր կաթուղիկոս ընտրուելու լուրը առնելուց յետոյ Պեսարբուրգից Մոսկվայի վերայով գնաց Աստրախան, այնտեղ Դաւթի Լենէգեթեցուց առանալով Սուլթանի հրովարտակը՝ ուղարկեց Ռուսաց Պօղոս կայսեր, և նորանից ևս հաստատութեան հրովարտակ ընդունելուց յետոյ 1801 Փետրվարի 11-ին շքեղ հանդիսով Թիֆլիզ մտնելիս՝ լսելով Վրաց Գէորգ Թագաւորի մահը, հանգուցեալ Թագաւորին յուղարկաւորելու համար ուղղակի գնաց Վրաց Սիօն մայր եկեղեցին, ուր և Թագաւորի դագաղի վերայ կարդաց յանուն նորա ուղղեալ Պօղոս կայսեր հրովարտակը։

Ցովհէփին ընդառաջելու համար Թիֆլիզ շտապելին չորս արքեպիսկոպոսներ, որոց հետ երբ Ցովհէփ պատրաստվում էջմիածին ուղևորուել՝ յանկարծ հիւանդացաւ և բերանացի խնդրելով իրան Սիմէօն կաթուղիկոսի մօտ թաղել՝ յանկարծամահ եղաւ Մարտի 9-ին, և մինչև քաղաքական իշխանութիւնից թոյլտուութիւն լինելը իւր կտակին համեմատ Սիմէօն կաթուղիկոսի գերեզմանին մօտ, Գայիանէի վանքի գաւթում թաղուելու՝ երկար ամիս անթաղ մնաց։

Դանիէլ 1800 Սեպտեմբերի 28ին Տենեդոսի արգելանքից ազատուելով՝ Պօլիս չըմտնելու համար Յովհաննէս պատրիարքից եւ դոկիայի առաջնորդ էր նշանակուած եւ 1801 Յունվարի 23ից արդէն Եւդոկիայում առանց պաշտօնը ստանձնելու սպասում էր Յովսէփի էջմիածին ժամանելուն՝ որ ինքն եւս գալով՝ իւր նուիրակութեան հաշիւը ներկայացնէր, իսկ Գալուստ Նոյեմբերի 4ին ազատուած Լիմնոսի արգելանքից՝ շարունակում էր Նիկոմիդիայի նուիրակութիւնը։

Յովսէփի ձեռնասուն աշակերտ Գրիգոր վարդապետ Ագթիրմանցի նկատելով որ, եթէ Դանիէլ կաթուղիկոս դառնայ, ինքն եպիսկոպոս եւ Ռուսաստանի առաջնորդ չի նշանակուիլ, լուր տարածեց թէ Յովսէփ վախճանելիս՝ կոտակել է կամ Կ. Պօլսոյ պատրիարք Յովհաննէս Զամոշրճեանին, եւ կամ Դաւիթ Էնէգեթեցուն կաթուղիկոսացնել. այս մասին գրեց նաեւ Կ. Պօլսոյ Ռուսական դեսպան Թամարովին, նորա թարգման Գրիգոր Ազայեկեանին եւ Յովհաննէս պատրիարքին. եւ հաստատ գիտենալով որ, եթէ հրաւիրակները էջմիածին հասնին՝ անպատճառ Դանիէլին պիտի ընտրեն կաթուղիկոս, դրդեց Վրաց արքայորդի Դաւիթին ու այլ պաշտօնէից ի դիպահարց պահել նոցա. ռուսկան հրաւիրակները իրանց դրութիւնը յայտնելով էջմիածնի վիճակաւորութեան՝ յանձնարարին Դանիէլին միայն ընտրել կաթուղիկոս։

(Շարունակելի) Ց. Վ. Մ.

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ԲԱՐՈՑԱԿԱՆ ԲԱՐԻՔՆԵՐ *).

Որովհետեւ դաստիարակութեան նպատակը բարոյական է, ուստի բարոյագիտութեան գիտնօրէն ուսումնասիրութիւնը ուսուցչի համար մի առանձին նշանակութիւն ունի. Եթէ ուսուցիչ պարոնը բարոյական գաղափարներ ունի, այն ժամանակ նա ոչ թէ միմիայն կրնի դաստատութեան մէջ

(*) Սոյն վերնագրով մի յօդուած գրած է Զուիցերիայի ուսումնարաններուն վերաբերեալ Վիս - Բուրգդորֆի մանկավարժ Դոկ. Դիտտեսի հրատարակած ամսագրում. հեղինակը իւր յօդուածում հետեւում է մեծաւ մասամբ կիրհմանի բարոյագիտութեան, որից մենք քաղուածօրէն առնելով ուղարկում ենք Ձերդ խմբագրութեան։

այդ գաղափարները աշակերտներին պիտի աւանդի այլև ընթերցանութեան և պատմութեան դասատուութեան մէջ։

Խօսքս գիտութեան մի առանձին գլուխ խօսումէ բարոյական բարիքների, կամ ըստ ոմանց վերջապէս-ընդհանուր մասին։ Ամենից առաջ այստեղ մի հարց է ծագում թէ ի՞նչ է բարոյական բարի։

Հարստութիւն, կարողութիւն, փառք և դրանց նմաններն ինքն ըստ ինքեան բարոյական բարիք չեն, որովհետև դոքա կարող են մարդուն նաև դէպի չարն տանել, օրինակ. դէպի զուարճասիրութիւն, իշխանասիրութիւն և այլն. բացի սրանից, գուցէ դոքա բարոյական ճանապարհով ձեռք չեն բերուած, ինչպէս որ այս շատ անգամ կեանքի մէջ պատահումէ։

Միայն այնպիսի բարին, որ բարոյական վարքով է ձեռք բերվում և, թէ անհատի և թէ մարդկութեան բարոյականութեան յառաջացման նպաստումէ, կոչվումէ բարոյական բարի։

Այդպիսի բարիքներ են ընտանիքը, սովորութիւնը, կրօնը, արուեստը, գիտութիւն, լեզու և այլն։ Սոցանից իւրաքանչիւրը այստեղ մի առանձին քննութեան է ենթարկուած։

## 1. ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ԲԱՐԻՆ.

Ի հնումն ամենաբարձր բարւոյ մասին մեծ եռանդով էին հարցնում. Եպիկուրեանները այդ գտնումէին զգայական աշխարհում. Ստոյիկեանները ընդհակառակն բացատրումէին, թէ գաղափարականն է միայն ամենաբարձր բարին։

Պլուտարքոս, Պղատոն և Արիստոտելէս աշխատումէին զանազան կերպով բանաւորի (գաղափարականի) և զգայականի մէջ մի միութիւն ձգել։

Ս. Օգոստինոս ցոյց էր տալիս որպէս ամենաբարձր բարին — Աստուծուն, և Քրիստոս ասումէր «փնտռեցէք Աստուծու արքայութիւնն և նորա արդարութիւնն, այն ժամանակ միւս բոլոր բաները կըտրուին ձեզ»։ Ըստ այսմ քրիստոնէի համար ամենաբարձր բարին կըլինէր Աստուծու արքայութիւնը, այսինքն իրերի աստուածային կարգաւորութիւն, որն Քրիստոսի հոգւով այս երկրի վերայ պիտի վերականգնուի։ Ուստի մենք վարդապետական ձևով հետևեալ կերպով կարող ենք ասել. ամենաբարձր բարին է Աստուծու ծառայութեան սրբագործուած և երջանկացած մարդկութիւնը։ Բայց մարդկութիւնը կազմվումէ զանազան անհատներից. ուստի և ամենաբարձր բարին անհատի համար կազմումէ երջանկութիւն։ Իսկ սա պարունակումէ միմիայն բարոյական կատարելութեան մէջ։

Ձար մարդը երբէք չէ կարող իրան երջանիկ զգալ, նա միշտ իւր մէջ նախատինք է կրում։ Սակայն հոգին ու սիրտը ճշմարտի, գեղեցկի և սրբի գաղափարական շրջաններին դարձնելն է, որ մարդուն ի ներքուստ երջանկացնումէ։ Ուստի Շիլլերն իրաւամբ ասումէ, «Նոյն իսկ 'արդու կամքը նորա երկնաւոր արքայութիւնն է»։

Եւ Մալտիոց ևս երգումէ հետևեալն.

Երանի նրանց որոնք մաքուր սիրտ ունին, մանաւանդ սիրտ ով Հայր, սա մի բարիք է, որ ամփոփումէ իւր մէջ մի թանկագին գանձ, դա մի ամրութիւն է այս կեանքի միջոց ճանապարհների վերայ, դա մի ապահովագոյն գահ է ամեն աչերիւ և գեղեցիկ բաներ տիրապետելուն, և մի սրտի անդորրութեան համար։ Դա մի առհաւատչեայ է ամեն բարի գործերի համար, դա մի վարձան է ամեն տեսակ զգայական զուարճասիրութեան դէմ, ահա, մի մաքուր սիրտ կրծքումդ ունենալն, նշանակումէ աստուածտեսութեան բնակարան լինել»։

Միայն կատարեալ մարդը կարող է երջանիկ լինել։ Բարի մարդը երջանիկ է և այդ երջանկութեան մէջ կատարելութեան միջոցով իմանում ենք ամենաարժէր բարիքը որի հետ միանում են միւս բոլոր բարիքները։ Բայց անհատի կատարելութիւնն պայմանաւորուած է ամբողջի կատարելութեամբ, և հէնց այս է առհասարակ աշխարհի ամենաբարձր նպատակը. ուստի մեզանից ամեն մինի կոչումն է նրան թէ իւր և թէ մեր մէջ իրագործի, իւրաքանչիւրը իւր տեղում պէտք աշխատի մարդկութեան բարոյականացման նպաստել։

Համեմատութեան համար մենք այստեղ յառաջ կբերենք մի քանի ասացուածներ փիլիսոփաներից։

Լոթցէն (Mikrokosmos - փոքր տիեզերք II, 302) ասումէ «Հաճութիւնը պինդ պահպանելու և ցաւից խուսափելու ձգտումն միակ դրդիչ պատճառն է բոլոր գործնական գործունէութեան համար»։

Պֆիցեր («իրաւունք, պետութիւն և եկեղեցի» II, 21) շեշտումէ, թէ ամենամաքուր բարեպաշտութիւնը և առաքինութիւնը, անձնուէր սէր և մի տեսակ ձգտումն է դէպի ամենապարզ, ամենակատարեալ երջանկութիւնը, և իւր սեփական ապերջանկութիւն վնտռելն բնութեան ընդդէմ է։

Պորան հակառակ պիտի նկատել, որ այդ շատ վտանգաւոր կլինի, եթէ մարդ իւր սեփական երջանկութիւնն որպէս ամենամեծ բարին համարէ, վասն զի առանց դորա էլ մարդիկների մէջ եսականութիւնը բաւական զօրեղ է։

Հէնց դրա համար է որ Կանտ ամեն մի եւդամոնականութեան դէմ լինելով ասումէ, «այդ հակասումէ նոյն իսկ բարոյականութեան սկզբունքին, եթէ մարդուն իւր սեփական երջանկութիւնն իրեն շարժառիթ լինի, այդ երջանկութեան սկզբունքը մի տեսակ մահ է ամեն բարոյականութեան համար։

Միւս կողմից Կանտը երջանկութիւնը դնումէ բարոյականութեան որպէս մի հետևանք։ Աղատութեան գիտակցութիւնը պարտքի հետևելուն մէջ տալիս է մեզ ինքնաբաւականութիւն, որին մենք պիտի հետևենք։

Ա մ ե ն - բ ա ր ի ք բ ա ր ե + բ ա ր ո յ ա կ ա ն ո ւ թ ի ւ ն է, հետևաբար սրանից մի անհրաժեշտ հետևանք կլինի երջանկութիւն։

«Առաքինութիւնը և երջանկութիւնը իմիասին կազմումեն մի հնարաւոր աշխարհի ամենաբարձր բարիք»։

Մենք Պղատոնի ասածով՝ կամփոփենք։

«Մտածել ինչ որ ճշմարիտ է, զգալ՝ ինչ որ բնական է, և կամենալ ինչ որ բարի է հոգին հենց դրա մեջ է ճանաչում բանական կեանքի նպատակը։

## 2. ԸՆՏԱՆԻՔ.

Ընտանիք այսինքն ամուսնութիւնից յառաջ եկած տնային ընկերութիւնը, կազմում է ամեն բարոյականութեան և քաղաքակրթութեան գլխաւոր նեցուկը։ Ամուսինները կազմում են բարոյական սիրոյ և կեանքի միաբանութիւն։ Ծնողներին են իւրեանց ընտանիքի ծնուած իշխանները, քահանաները և օրէնստուները տնային առաքինութիւններից յառաջանում ամեն տեսակ քաղաքական առաքինութիւններ։ Տունը որոշում է ապագայ սերընդի թէ մարմնաւոր և թէ հոգեկան զարգացումն։ այստեղ է որ մանուկի բնաւորութիւնն կեանք մտնելուց առաջ կազմակերպվում է, նորա դաստիարակութիւն սկսվում է նորա առաջին շնչառութեան հետ և մեծաւ մասամբ յաջողուած կամ պակասաւոր է լինում, յառաջ քան մանուկը ինքնագիտակցութեան կըգայ։

Մատաղ հասակում, որ ամեն տեսակ տպաւորութիւններ ընդունելուն ընդունակ է, սովորում մարդ մեծաւ մասամբ, և նորա կամքը, խառնուածքը և հոգին սահմանում ապագայի համար բնաւորութիւն։ Նա սովորութեամբ օրինակով և տան ամբողջ հոգւով աւելի շատ է սովորում քան թէ ուսումնարանի, եկեղեցու և հասարակական կեանքի*) միջոցով։ Հէնց սրա համար է, որ ծնողների վերայ ահագին պատասխանատուութիւն կայ իրենց զաւակների դաստիարակութեան վերաբերմամբ։

Ծնողներ պարտաւոր են իրանց զաւակներին ընդունակ դարձնել այն բանի, որ նոքա որպէս ժառանգներ կարողանան տիրել մինչև ցայժմ եղած կուլտուրայի գանձին և իւրեանց սեփական աշխատութեամբ այդ գանձը շատացնեն։ Այսպէս ուրեմն դաստիարակութիւնն կատարեալ մտքով շարունակութեամբ մարդկութեան պատմութիւնը։ Գլխաւոր խնդիրը դաստիարակութեան մէջ բնականապէս ընկնում մօրը, որովհետև, մինչդեռ հայրն աշխատութեամբ առանձնապէս ճանաչողութեան և հնազանդութեան բերելու, մայրն այդ միջոցին խնամքով զգացմունքներն, որոնց վերայ հիմնուած են բնաւորութիւնը, կրօնը և գեղարուեստը։ Մայրն ամենից առաջ ստեղծում տան բարոյական օդը, որն ներքին մարդուն կազմում։

Այո՛, թէ և կանայք ոչ մի գործիք հնարած չեն, ոչ մի գիւտ և յայտնագործութիւն չեն արած, բայց նրանց միջոցով մեծ և առաքինի մարդիկ և կանայք դաստիարակուած են**), և այս բաւական շատ է։ Շատ նշանաւոր մարդիկ պարծենում իրենց մայրերի իրանց բնաւորութեան վերայ արած օրհնելիր ազդեցութեամբ։ Բաւական է որ մենք այստեղ յիշենք Ս. Օգոստինոսին, Կրոմուելլին, Վեսլէին, Գեօթէին, Շիլլերին և Վաշինգտո-

(*) Ethik. 168. v. Kirchner.

(*) Smites. Charakter.

նին. — ուստի կնոջ կրթելն նշանակում քաղաքակրթութիւնը բարձրացնել, և դաստիարակութեան ամեն լաւ եղանակն այն կլինէր, ինչպէս որ Նապոլէօն Ա. ևս ճանաչած էր, որ կարողանար այնպիսի մայրեր պատրաստել, որ նոքա իրենց զաւակներու կրթելն հասկանային։

Մանուկները իրանց կողմից ևս պարտաւոր են պատկառանք ունենալ դէպի ծնողները, նա և այն ժամանակ, երբ նոքա հասակ են առած և ինքնուրոյն դրութիւն են ստացած։

Մանուկը իւր քոյրերի և եղբայրների մէջ է գտնում իւր բնական խաղակից և ուսումնակից ընկերները, նրանց հասակի, ցեղի և բնաւորութեան զանազանութիւնները հարստացնում են ընտանեկան կեանքը։ Այս մարմնաւոր-բնական յարաբերութիւնից պէտք է փոքր առ փոքր բարեխոհութեան հոգևոր-բարոյական յարաբերութիւնը զարգանայ։

## 3. ԿՐՕՆ.

Առանց կրօնի չըկայ ոչ մի ազգ, կուզէ դա կուռքին, գաղափարական մարդուն կամ Աստուծուն որպէս հոգուն երկրպագելու լինի. դրա մէջ անչիջանելի մնացած է սիրոյ հաղորդակցութեան զգացմունքը աստուածայինի հետ, և միևնոյն Աստուծուն հաղար անուան տակ էին երկրպագում։

«Անուանիր ինչ որ կամենումես, թէ բաղդ, թէ սիրտ, թէ սէր, թէ Աստուած. — ես դրա համար ոչինչ այլ անուն չունիմ, դա միայն զգացմունք է», Գէօթէ.

Այս օրուան օրս կրօնը նոյն է, ինչ որ ժողովրդական փիլիսոփայութիւնը և ժողովրդի բարոյականութիւնը նա պարունակում իր մէջ այն, ինչ որ ժողովուրդը գաղափարական աշխարհահայեցողութիւնից ունի։

Ի՞նչ է կեանքն առանց կրօնի։

«Մի կեղև առանց միջուկի, գարունք առանց ծաղկի»։

«Առանց բարձր աշխարհահայեցողութեան, որն միմիայն Աստուածաճանաչութիւն է տալիս, չէ կարող մարդ իրեն բաղդաւոր զգալ, նա կըզրկուի ամենամաքուր և արժանաւոր ուրախութիւնից և իւր երկրային վայելմունքից։

Բացի սորանից, մարդ-կրօնի սուրբ գաղափարով տոգորուած, դիւրագոյն կարողանում է տանել իւր գոյութեան տանջանքներն և ուրախանում մեծ ուրախութեամբ, որ նորան ճանապարհին ծաղկած հանդիպում է, նա անպղտոր մտքով ապրում և ուրախանում է ճշմարտի, գեղեցկի, սրբի և յաւիտենականութեան աշխարհում, որին մարդ հոգեպէս պատկանում է»։ (Տիշլեր)։

Ըվեցել կրօն էր համարում այն՝ «եթէ մարդ ըստ Աստուծոյ մտածում և ապրումէ, եթէ լի է հոգւով և ամեն բան անումէ ոչ թէ պարտքից դրդուած, այլ սիրուց, նա անումէ այդ, որովհետև կամենումէ, և նրա համար է կամենում, որովհետև Աստուած այդ ասումէ, այսինքն Աստուած մեր մէջ»։

Եթէ ոք մեր ժամանակում շատերն ուղղափառութեան ընդդէմ լինելով

Հակա՝ եկեղեցական և անկրօն են ուզում լինել նորա իրանց կարճատեսութեամբ կընկնեն ծայրահեղութեան մէջ, նորա մոռանում, որ այդ հոգուն է վերաբերում և ոչ թէ գրերին, ճշմարտութեան և ոչ թէ ձևականութեան, կրօնին և ոչ թէ մի որ և է դաւանութեան։

Հելլագայում իսկ այդպէս էր, ժողովուրդը դաւանում բազմաստուածութիւն, իսկ քահանաները իրանք ուսուցանում էին զանազան միստերիաներ (կրօնական գաղտնիք) և փիլիսոփաները որոնում և գտնում էին մի և նոյն ճշմարտութիւնը, ինչպէս մենք։ Ուստի հարկ չէ որ մենք այն եկեղեցուց հրաժարուի, որի մէջ որ նա ծնուած է, ընդհակառակն եթէ մենք խորհենք, թէ որքան մենք ամենքս քրիստոնէութեան պարտական ենք, թէ ինչպէս մեր ամբողջ մտածմունքն ու զգացմունքը դորա հետ սերտ կապուած է, և թէ ինչ տեսակ վտանգի մէջ ժողովրդի բարոյականութիւնը կը գտնուի, եթէ որ եկեղեցին ընկնի, և վերջապէս, չնայելով Ս. Գրքի և եկեղեցական մատենագրութեան, որքան բարի դրդումներ մի հոգուից քարոզիչ մէզ տալիս է, այսպէս մենք պարտական ենք, որպէս մեր բարոյական պարտք, եկեղեցուց չինութեան գործակից լինել։

## 4. ԳԻՏՈՒԹԻՒՆ.

Քրիստոսից 6 դար առաջ սկսուեց արևելքում փիլիսոփայական և դիտական ճանաչողութեան աշխարհայեցողութեան ձգտումն զարգանալ։ Ցուցնաց ազգը ամենից առաջ մեծամեծ խնդիրներ առաջ դրեց,—ո՞րտեղից, ի՞նչ և ի՞նչ բանի համար ենք։ Ի՞նչ կարող ենք իմանալ։ Ի՞նչ պիտի անենք մենք։ ի՞նչ բանի պիտի հաւատանք։ Այդ ժամանակից մարդս չէ դադարած այդպիսի բաներ հետազօտելուց, և այն մարդիկ, որոնց կոչումն այդ խընդիրն լուծելն է, կոչվումեն փիլիսոփաներ—իմաստասէրներ։ Փիլիսոփայութիւնից յառաջ են գալիս միւս բոլոր գիտութիւնները և ամենայն հետախուզողն, որ ճանաչողութեան սահմանն ընդարձակած է, աւելի է նըպաստում մարդկութեան, քան թէ մի աշխարհակալ, որի խարազանի տակ ազգերը հեծում և հառաչումեն։

Գիտութիւն տարածելու նպատակով հիմնուած են համալսարանները։

Ծողովրդական ուսումնարանը տալիս է տարրական կրթութիւն այնչափ, որչափ որ մի քաղաքացու համար կարևոր է. ուստի մի կուլտուրական պետութիւն ամենայն իրաւամբ պարտաւորուած է ուսումն պարտաւորեցուցիչ անելու։ Ծողովրդի (կրօնը մեծ նշանակութիւն ունենալու պատճառով) ուսումնարան չը պիտի առանց կրօնի լինի. նա պարտաւոր է իւր սանիկը ոչ թէ միմիայն գործնական կեանքի համար նախապատրաստել այլ պետութեան, եկեղեցւոյ, և հասարակութեան գործունեայ և օգտակար անդամ դուրս բերել. նա պարտաւոր է ոչ թէ միմիայն քաղաքացիներ, այլ և բարի մարդիկ կրթել։ Ուսումնարանն երբէք չը պիտի մոռանայ, որ նա տան լրացուցիչն է, ուստի նա պարտաւոր է ամենից առաջ բարոյական առաքինութիւնները խըրատել, սրբութեան ամփոփումն ոչ թէ միայն ճանաչողութիւններ այլ և

ընդունակութիւններ, այսինքն գրանց ինքնուրոյն ընդարձակել, ո՛չ թէ միմիայն միտք, այլ և նոյնպէս «կրթ» և կամ։

Դիտութեան միակողմանի շեշտելն կը վնասէ մի ազգի, հարկաւոր է միշտ բազմակողմանի զարգացումն և ոգևորութիւն բարոյական բարիքների պատմութեան, գրականութեան, գեղարուեստի, և կրօնի համար։

«Մեծ մաքերը և մաքուր սիրտը, այս է որ որ մենք մեզ համար (նաև երիտասարդութեան համար) Աստուծուց պիտի խնդրենք»։ (Գէօթէ)

Եթէ մենք բնաւորութիւնը և սիրտը, այնպէս կրթենք երիտասարդութեան մէջ, ինչպէս որ միտքը, այն ժամանակ մենք չենք գանգատիլ այժմեան երիտասարդութեան անհնազանդութեան, յանդգնութեան, նիւթապաշտութեան, չափազանց զուարճասիրութեան և կոպտութեան վերայ։

## 5. ԳԵՂԱՐՈՒԵՍՏ *)։

Թէ ինչպէս, ըստ հին ղրոյցին, Օրփէոս իւր քնարի գրաւիչ ձայնով անտառի կենդանիները կաշկանդումէր, կոյր Հոմերոսը իւր երգերով ամբողջ Յունաստանին մխիթարումէր, Տիրտէուս իւր դիւցազնական երգերով Սպարտային մարդկերանց դէպի յաղթական պատերազմը ոգևորումէր, և թէ ինչպէս Պիւթագորաս իւր լեզուով իշխաններին և ազգերին երջանկութեան ճանապարհ բացարեց, այս ամենը պարզ ցոյց են տալիս որ դիտութիւնները և գեղարուեստները ամեն ժամանակ ունին իւրեանց սուրբ առաքելութիւնը երկնային գոյութիւնը յացատրել, և ամեն մինի սիրտը լեցնել, եթէ որ այդ սիրտը քարից չէ։

«Բարեգործիչ են» ասումէ Վալբերտ գեղարուեստների գործերը, որովհետև նոքա անմեղ կերպով մեզ զուարճացնումեն։ Շատ անհիմն է այն կարծիքը, իբր թէ գեղարուեստները հոգուն քնացնումեն։ Մեծն Աղէքսանդր, ասաւ, Մեծն Գրիդերիկոս գեղարուեստների ջերմ բարեկամ էին, լուսաւորուած յոյները և հռոմայեցիները կոպիտ բարբարոսների վերայ յաղթութիւն էին տանում։ Բացի սրանից կան նա և գեղարուեստները, որոնք հոչակաւոր մարդկերանց յիշատակները արձանների միջոցով յաւերժացնումեն, հոգուն դէպի ամենաբարձր աստուածպաշտութիւն է բարձրացնում։ Գեղարուեստները միացնումեն գլուխը և սիրտը, կապումեն գեղեցիկը սուրբի հետ և յատաջ են բերում սէր դէպ յաւաքինութիւն։

Գէօթէն իւր բանաստեղծութեան մէջ մի տեղ գանգատումէ.

«Ով որ բանաստեղծութեան ձայն չէ հասկանում, նա բարբարոս է. ով կուզի դա լինի»։

Ա՛յս պատճառով ոչ որ իրեն միակողմանի չը պիտի կրթի, ինչպէս որ այսօր շատերն անումեն։ Բաւական չէ, որ մինը մի ամբողջ իրաւաբան, բժիշկ, գինուորական կամ վաճառական լինի, և թէ միմիայն իւր առարկայով սահ-

(*) Դոկտ. Վոլֆարտ «Երջանկութեան վարդապետութիւն»։

մանուածակուի և ամեն վսեմ բաների համար իւր հասկացողութիւնը կորցնէ։ Ինչպէս մեծն Ֆիրդուսին իւր սրնգի (Glöte), Լուտերը՝ Պաշնամուրի Փա-ւլիթը իւր քնարի վերայ ածողները, այնպէս ևս իրաքանչիւր լուսաւորուած անձն պիտի առ նուազն պիտի աշխատի մի արուեստ հետզհետէ մշակել։ Ոչ սակաւ կարևոր էր, որ ամեն մի լուսաւորուած ընտանիքում հին և նոր կլասսիքներից կազմուած փոքրիկ գրադարան գոյութիւն ունենար։ Ինչպէս որ լաւ երգերը յաճախակի չէ կարելի երգել, այնպէս ևս այդպիսի գրուածների ընթերցուելն դրանց մէջ ևս չափ և սահման պիտի պահպանել ինչպէս նաև ամեն բանի մէջ։ «Նուագարանը նկատումէ Հերդեր, նա և առանց բառերի միայն ձայնով ունի մի տեսակ վսեմութիւն, որը ոչ մի գեղարուեստ չունի, նա կարծես թէ հանճարի լեզուն լինի, որ անմիջապէս մեր սրտի խորքերի հետ խօսակցումէ։ Եւ Կարօլինէ Ֆոն Վոլցոգէն ասումէ։ «Նուագարանը մի բարձր և նուրբ լեզուէ քան թէ բառերով արտայայտած լեզուն և սկզբու-մէ այնտեղ ուր վերջինս դադարումէ»։

## 6։ Լեզուն։

Լեզուն է մտքերի արտայայտիչը։ Նա իւր հասկացողական բովանդակութեամբ նուագարանից բարձր է, որովհետև նա մեր զգացմունքները մտքերը և ցանկութիւնները— մէկ խօսքով մեր ամբողջ հոգեկան կեանքը արտայայտումէ։ Մարդուս ընդունակութիւնը չափումն նորա խօսակցուց։ «Շատ և լաւ խօսիլն մի սրամիտ գլխի տաղանդն է, քիչ և լաւ՝ մտածողի բնաւորութիւնն, շատը և վատը՝ ցնորամտի կատաղութիւնն քիչը և վատը՝ յիմարի թշուառութիւնն»։ (Հոֆֆելանդ)

Լեզուի մեր վերայ դրած առաջին բարոյական պարտքն է ճշմարտախօսութիւն։ Լեզուն նորա համար չէ, որ մենք մեր մտքերն ծածկենք, և եթէ մեծամասնութիւնը այդ սկզբունքին հետևի, այն ժամանակ հասարակութիւնը կը քայքայուի։ Եթէ դու միշտ չես համարձակիլ մտածածդ ասել, գոնէ մտածիր միշտ, երբ դու խօսելիս կլինիս։

Խօսքերը մտքերի համար այն են, ինչ որ ոսկին ադամանդի համար, այս ինքն ընդելուզող. խօսքերը ոչ թէ միայն մտքեր են, այլ և գործեր։

Ոչ միայն զօրավարի խօսքը, որն պատերազմի հրամանն է տալիս, մի գործ է այլև մտածողի, մարգարէի, բանաստեղծի խօսքը։ «Ճշմարիտ խօսքերը կեն դանի էակներ են» (Բայրոն)։ Նոքա արտասանուելուց զկնի բաւական երկար են ներգործում, հենց սորա համար է որ մենք ամենայն մի խօսքի համար պատասխանատու կացուցանենք։ Լեզուն շատ սուր է, նա այնպէս խոր վէրքեր է յառաջացնում ինչպէս մի երկայրի սուր։ Խօսքերով ազօթում ենք բարձր երգում ենք, որով մարդկային կուրծքը դողում է։ Սակայն խօսքերով կարելի է նա և մերձաւորներին վշտացնել, անմեղներին դատապարտել և ամեն գաղափարներ ծաղր ու ծանակ առնել։ Մի թոյլ տուէք ձեր բերանները բարբարոսութիւն անելու։

Գրերի գիւտի միջոցով յառաջ եկաւ գրականութիւն, այսինքն լեզուով և գրերով արտայայտուած հոգեկան գոնձի հասկացողութիւնը (In begriff.)

*Գրականութիւնը նեղ մտքով ամփոփումէ մի ազգի գրաւոր արուեստական գործերը, որոնք նորա բարքը և սովորութիւնը արուեստական կերպով ներկայացնումեն։ Գրականութեան նպատակն է մարդկութեան աշնուացումն մտքի լուսաւորութեան զգացմունքի վսեմութեան և կամքի պարզութեան միջոցով։*

*Ինչպէս որ յոյները Հոմերի միջոցով դէպի բարոյականութիւն կրթուեցան, այնպէս ևս այսօր մի ազգի համար իւր ազգային գրականութիւնը նորա կրթութեան գլխաւոր աղբիւրն է։ Գերմանական ազգի առաքինութիւնները արտացոլումեն գերմանական գրականութեան մէջ։ Լբնականութիւնը՝ եկեղեցական երգերում, ձգտումն դէպի ճշմարտութիւն «Փաւստի մէջ, քաջութիւնը դիւցազնական առասպելներում, նիբելունգներում, «Թէլի» մէջ։ 1813—1870 ի հայրենասիրական քնարերգութեանց մէջ արտայայտվումէ յարգանք դէպի կանայք։*

*Գրքերից յառաջ եկած զօրութիւնից հեղինակի և թէ ընթերցողի վերայ, ընկնումէ բարոյական պատասխանատուութիւն։ Հեղինակը կամ գիրը շարադրողը պէտք է մտաբերի այն, ինչ որ Շիլլեր արուեստաւորի մասին ասումէ։ «Մարդիկների արժանիքը ձեր ձեռին է, պահպանեցէք նրան»։ գիրք շարադրողն պիտի ժողովրդի ուսուցիչ և բարեկամ լինի, նա աստուածաւթեան քահանայ պիտի լինի։ Սորա հակառակն ընթերցողը պիտի նմանի մեղուին, միայն մեղր և ոչ թէ թոյն պիտի ժողովէ գրքերից, նա ամեն ինչ պիտի քննի և լաւն պարտաւոր է պահելու։ Նոյնպէս գրքերի մասին կարելի է մի և նոյն խօսքը ասել։ «Վատ հասարակութիւնը ապականումէ բարի սովորութիւնները»։*

*Մարդու կարդացած գրքերից կարելի է իմանալ նորա բնաւորութիւնը, որովհետև նա նրան չըջապատող հասարակութիւն է։ Ուստի ծնողները և ուսուցիչները պիտի հսկեն իրենց սանիկի ընթերցանութեան վերայ։ Առանձին հոգատարութեան կարօտ է ղրուցատրական ընթերցանութեան ընտրութիւն։ Նաև չափից դուրս ընթերցանութիւնից պէտք է մարդ զգուշանայ, որովհետև դա հոգուն ջլատումէ, երևակայութիւնը արբեցնումէ և կամքը թուլացնումէ։*

---

## 7. ԲԱՐՈՑԱԿԱՆ ԱՆՁՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ.

*Հակառակ այսօրուայ ինտելեկտուալիսմուայի (միմիայն մտքերի և հասկացողութիւնների վերայ հիմնուած փիլիսոփայութիւն, որն հաստատումէ, թէ միմիայն մտքը կարող է ճշմարտութիւն ճանաչել և արտաքին աշխարհը ընդունումէ որպէս մի երևոյթ) մենք ամենից առաջ պիտի շեշտենք բարոյական բնա-ը-ր-ութիւնը (charakter)։ դա ամեն մի անհատի համար ամենաբարձր բարին է։ «Բնաւորութեան տէր մարդիկ, ասումէ Էմերսօն, մարդկութեան խղճմտանքն են կազմում»։*

*Ի՞նչ կընպաստեն մեզ բոլոր բարիքները, ի՞նչ օգուտ կըտայ մեզ հաստատութիւնը և կարողութիւնը, ի՞նչ կօժանդակէ մեզ արուեստը, գիտութիւնը և կրօնը եթէ որ դորա բարոյականութեան չեն ծառայելու։ Բնաւո-*

թուրքիանը աւելի նշանակութիւն ունի աշխարհի մէջ քան թէ մի որ և է սեփականութիւն, նա՝ ներքին արժէքի, մարդկային արժանաւորութեան ամենաբարձր բարին է։ Բնաւորութիւնը ամեն մինի ինքնուրոյն գործն է, որովհետև այդ ամեն մինից կախումն ունի, թէ նա ինչպիսի բնաւորութիւն ստանալու է։ Բոլոր մեր զգացմունքներն, մտքերն, խօսքերն ու գործերն ազդումեն նորա վերայ, ուրեմն մեր ինքնակրթութեան ասպարէզը շատ մեծ է. բնաւորութիւնը մեր ամբողջ կեանքի հետևանքն է, դորա համար է որ Գեօթէն ասում է. « Մարդու պատմութիւնն նոյն իսկ նորա բնաւորութիւնն է »։

Հարուստ, հզօր, գիտնական չէ կարող ամեն ոք լինել, բայց ազնիւ և առաքինի լինելն ամեն ոք կարող է. եթէ մարդ հանճարի վերայ է զարմանում. այնուամենայնիւ ամեն մինը ցոյց է տալիս պատկառանք՝ բնաւորութեան։ « Բնաւորութիւնն է, ասում է Սմայլս », մի սեփականութիւն, նա ամեն ունեցածներից ամենազնիւն է ». նա ստեղծում է ընդհանուր բարեացակամութիւն և պատկառանք առ մարդիկ »։ Մարդկութեան ամենազնիւ ներկայացուցիչների մեզ տրուած մեծ օրինակների լուսով առաջնորդուած, իւրաքանչիւրը մեզանից պիտի ձգտի բնաւորութեան աստիճանին հասնելու, ոչ թէ նիւթական միջոցներով ամենահարուստ պիտի լինել այլ հոգւով, ոչ թէ աշխարհային դրութեամբ ամենամեծ լինել, այլ ճշմարիտ ազնուութեամբ, ոչ թէ ամենախելօք, այլ առաքինի, ոչ թէ ամենազօրեղ և ազդեցութիւն ունեցող, այլ ճշմարիտ, և ուղիղ և ազնիւ »։

Ամեն մի ազգ, ստանում է իւր հոգեկան նշանները մեծ մարդիկներից. Մեծ մարդիկ ոչ թէ միմիայն մի ազգի զաւակներ են, այլ և հայրեր։ Իւրաքանչիւր Գերմանացի կրում է անգիտակցաբար Լուտերի, Կանտի և Շիլլերի կնիքը, ամեն մի Իտալացի՝ Դանտէինը, ամեն մի Անգլիացի՝ Շեկսպիրինը և այլն. և որքան երկար մի ազգ իւր ճշմարիտ մեծ մարդկերանց սիրով և պատկառանքով է նայում, նա երբէք կորստեան անդունդին չի մատնուիլ. նոյն ինքն երբ օտարի լծի տակ է հնծում, բարձրանում են այդ ժամանակ դիւցազունների տուներները և փչրում շղթաներ։

Բայց եթէ ազգի ճրագները արհամարհուին և մոռացուին եթէ մի ժողովուրդ այլ ևս չէ աշխատում իւր բնաւորութիւնը ազնուացնելու և եթէ հարստութիւնը, զուարճութիւնը և անփութութիւնը գերակշռեն գաղափարական շահերին ( Interessen ), այն ժամանակ ամենալաւ կարգադրութիւնն անգամ կարող չէ ազգային աւերակ դրութիւնը բարոյապէս վերականգնել և հետզհետէ ազնուացնել։

1886 Յունվ. $^{11}/_{23}$ Բօնն. Սարդիս Տէր Գաբրիէլեանց.

## «ՔՐԻՍՏՈՍ ՑՍՐԲՆԱՅ Ի ՄԵԹԵԼԱՑ»

Ո՛, որ ի սուգ անմխիթար հեծէք և լայք զօրն ոգւոյն
Ջոհրելոյն մահ յիշելով և զնորա բան օրհասին,
Քրիստոս յարեաւ ի մեռելոց, առհաւատուցեալ յոյս յարութեան.
Ուրախ լերուք, զի՝նդ սիրելոյն յառնել ունիք ի կեանս անմահ։

—

Ո՛, որ իբրեւ ոգւոյ մարմին, անլոյս, անյոյս կայք և հեծէք
Ի սիրելեացն անձուկ ուսմամբ աչօք առ գուբս վայրահակ,
Քրիստոս յարեաւ ի մեռելոց, յոյս, լոյս և կեանք և փրկութիւն.
Հաւատացէք ի Նա յուսով, հոգւով լինջիք նմա կցորդ։

—

Ո՛, որ ի հոգ և ի տառապանս աղքատութեան էք տառապեալ,
Ջամենայն կեանս հոգոյ եղէք հոգալ զանձանց ձեր գկտրիս,
Քրիստոս յարեաւ ի մեռելոց, վաստակելոց հանգուցիչ Հայր.
Արկէք ի Նա գհոգս ձեր, լիրուք գործօն և անվրհատ։

—

Ո՛, որ ի մեզս էք զգայեալ անապաշաւ ամենևին,
Դարձի յուսոյ չտայք նշոյլ, վիրօք մեզաց հոգեվարեալք,
Քրիստոս յարեաւ ի մեռելոց, բժիշկ ըստ ձեզ ախտացելոց,
Դարձէք առ Նա դարձցի առ ձեզ բառնալ զձեզ ի յանկմանէդ։

—

Ո՛, որ ի կեանս երկրաւորս միայն կապեալ և զուարճանայք,
Անհոգ բնաւին ի յերկնայնոյն, անցաւորին հեառամտեալ,
Քրիստոս յարեաւ ի մեռելոց, առքերելով մեզ կենաց յոյս
Ոչ անցաւոր և ապցաւոր, այլ երկնային և անապական։

—

Մխիթարիչ ոգւոյ՝ Քրիստոս յարեաւ ի մեռելոց
Ցոյս, լոյս և կեանք բանաստիչելոց՝ Քրիստոս յարեաւ ի մեռելոց
Հայր հանգուցիչ տառապելոց, Քրիստոս յարեաւ ի մեռելոց։
Բժիշկ մեղաց ախտացելոց՝ Քրիստոս յարեաւ ի մեռելոց,
Ընդոստուցիչ թմրեցելոց՝ Քրիստոս յարեաւ ի մեռելոց։
Քրիստոս յարեաւ ի մեռելոց, Քրիստոս յարեաւ ի մեռելոց։

Ց. Վ. Մ.

## ՅՅԼԵԻՅՅԼՔ·

—

Զատկի կիւրակէի օրը Վեհափառ Հայրապետն ամենայն Հայոց Տ· Մակար Սրբազնագոյն կաթողիկոս սուրբ պատարագ մատոյց և յետ պատարագին ի շնորհաւորութիւն Քրիստոսի սուրբ Յարութեան հաճեցաւ ընդունել միաբանութեանն, ճեմարանի վարժապետաց և աշակերտաց, Վաղարշապատի առաջնորդ անձանց և դիւանատանց անդամոց։

—

Մեծապատիւ Պարոն Սիկողայոս Տէր Յակոբեան գալով Մայր Աթոռս հաճեցաւ նուիրել ի նպաստ Մայր Տաճարի վերանորոգութեան՝ 100 րուբլի, ճեմարանի ընդհանական բաժնի համար՝ 300 րուբլի և ճեմարանի գրադարանի համար իւր գրատունը՝ աւելի քան 400 կտոր ընտիր գրքերով։ Նոյնպէս և Նոր Նախիջևանի Ս· Թէոդորոս Եկեղեցւոյ երիտասարդ Պ· Սագիրեան նուիրել է ի նպաստ ճեմարանի 300 րուբլի։

Աստուած ի հաճոյս իւր ընդունելով յիշեալ բարեսէր անձանց նուէրը վարձատրէ նոցա ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ բիւրապատիկ բարեօք։

—

Ընծորհակալութեամբ ստացանք «Երևակայական հիւանդ» կատակերգութիւն Մոլիերի, թարգմանութիւն Պ· Երուանդայ Լալայեան· գինն է 40 կ· և «Մի կամիլ արիւն» թարգ· Ս· Ամիրեանց, հրատարակութիւն Սմբատ-բէկ Լալայեանի· Գինն է 20· կօպէկ։

—

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ·

(Ի ՄԱՐՏ ԱՄՍՈՑ ՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ)

### ՎԱՐՉԱԿԱՆՔ·

26 Մարտի· Սինօդը ըստ գրութեան Կ· Պօլսոյ Հայոց պատրիարքին շրջաբերական հրաման ուղարկեց բոլոր վիճակային առեւաններին, որոնել և գտնելուց յետոյ՝ ուղարկել Կ· Պօլսոյ Հայոց պատրիարքարանը Վանայ Դարման գիւղացի Աւօյեան Ալլահ-վերդի անուն անձին, որ տասն ամաց հետէ անհնամ թողնելով իւր կինն ու ընտանիքը՝ հեռացել է Ռուսաստան։

—

24 Մարտի· Սինօդը շրջաբերական հրաման ուղարկեց բոլոր վիճակային Առեւաններին այսուհետև տպագրելի բոլոր թերթերը, եկեղեցական չափաբերական Մատեաններըը, Երեսփոխանական տոմարները, և խոստովանութեան տետրակները իւրաքանչիւր տարի մինչև Մայիս ամիսը ուղարկել որ-

պագրելու Մայր Աթոռոյս Ցպարանում, ներկայացնելով յիշեալ տպագրելեաց տպագրութեան և կազմի գների ցուցակը, նոյն օրինակին հետևել պարտաւորելով նաև բոլոր Հոգևոր կառավարութեանց։

— 19 Մարտի. Սինոդը Կովկասեան կողմանցս Հայ քահանայից վիճակը բարւոքելու համար առաջադրեց Երևանայ, Տփղխոյ, Ղարաբաղու, Շամախւոյ Հայոց կոնսիստորեաններին և Կարս և Բաթումի նահանգաց Հոգևոր գործոց Կառավարչին, որ պարտաւորեցնեն հայ հաստարակութեանց քահանայացու առաջարկելիս՝ հարկաւոր վկայականների հետ ներկայացնեն նաև մեծագոյն մասին ստորագրութեամբ շինական դատարանի վաւերացմամբ համախոհական վճիռ, բացի օրինական կարգաւ սահմանեալ հոգևոր օրինակատարութեանց տուրքերից՝ տալ նաև—մի համբան՝ մի սոմար (3 փութ), կէս համբան 1½ փութ, քառորդ համբան 36 ֆունտ ցորեն, և մի չարէք վարելահող՝ առանց մի հարկապահանջութեան թէ տրքունի և թէ կալուածական գիւղում. և եթէ իրանց խոստումը չը կատարեն, քահանայք ունին իրաւունք օրինաց ԺԱ. հատորի Ա. մասին 1048 յօդուածին համամատ դիմել քաղաքական իշխանութեան՝ կոնսիստորեայի միջոցաւ. առանց այս պայմանագրի՝ քահանայ ձեռնադրելու համար խնդիր չի ընդունուիլ և կոնսիստորեաններն էս պէսք չէ ընդունեն։

— 14 Մարտի. Սինոդը Արժ. Վեռնեդ վարդապետ Ծովակիմեանին, նորա ի 5 Մարտի տարւոյս յանուն Վեհափառ Կաթուղիկոսի մատուցած թախանձագին խնդրանաց և Նորին Վեհափառութեան ի 6ն Մարտի մակագրական առաջադրութեան համեմատ արձակեց Ճեմարանի աւագ վերակացութեան պաշտօնից որոշելով բոլոր կահ կարասիքը ցուցակով յանձնել Ճեմարանի վերատեսուչ Գ-ը. Մեսրոպ եպիսկոպոս Սմբատեանին։

## ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆՔ.

— 7 Մարտի. Սինոդը ըստ քննութեան Տաթևու Հոգևոր կառավարութեան՝ ստուգելով որ Սիւնեաց վիճակի Անկեղակոթ գիւղի Ծովսէփ քահանայն արբեցութեանց անձնատուր եղած՝ անհոգ է գտնուել մկրտելու իւր ծուխն եղող Մարկոս Ցարութիւնեանի նորածին երեխան, որ մեռել է անկնունք, որոշեց զանցառու քահանային ենթարկել միամեայ եկեղեցական ապաշխարանաց, առանց փիլոնի տեղւոյն եկեղեցւոյ դրանը կանգնեցնելով։

17 Մարտի. Սարգիս Վարդապետ Տէր Գասպարեանը, որի վերայ Սինոդի ի 25 Սեպտ. 1881 ամի վերջին վճռով դրուած էր պարտականութիւն դրամական կարողութիւն ունենալու միջոցին վճարելու մաս առ մաս Էջմիածնայ գանձարանին, Մխիթարեան Ստեփաննոս վարդապետի (այժմ Եպիսկոպոս) 1877 թուի արած քննութեամբ Քիշնեւի վանքապատկան կալուածո-

Նրից գաղած 14,853 ր. 65 կոպէկ գումարը, քանի քանիցս Սինօդին դիմելուց և արդարացուցիչ փաստեր առաջարկելուց յետոյ. Սինօդը կամենալով վերահաստատ լինել նորա յառաջ բերած արդարացուցիչ փաստերի իսկութեան, նորա քննութեան գործը վճռեց ենթարկել վերաքննութեան, ուստի և Կարևոր տօմարները և գործերը 1884 ամի Նոյեմբերի 19ին № 2790 հրամանով յանձնեց Յայնժամեան Բ. Ներսիսեան վիճակաւոր առաջնորդին մի բարեյոյս և ընդունակ հոգևորականի ձեռքով վերաստուգելու քննութիւնը և վերադարձնելու Սինօդին քաղուածով և իւր եզրակացութեամբ. Այդ վերաստուգութիւնը յանձնուեց Դրիգորուպօլսոյ Հոգևոր կառավարութեան անդամ Դաւիթ Աւագ քահանայ Շահինեանին, որ վերաքննութիւնը կատարելուց յետոյ վերադարձրեց բոլոր գործը վիճակաւոր Առաջնորդին, և վերջինս, իւր 20 Յուլիսի 1885 ամի № 82 յայտարարութեամբ Սինօդին. Սինօդը յօդուած առ յօդուած համեմատելով նախկին քննութիւնը վերաստուգութեան հետ՝ գործի հանգամանքին համեմատ գտաւ վերաստուգիչ քահանայի եզրակացութիւնը, որ է այսպէս.

«Արդ ի վերայ այսր ամենայնի յետ մանրազննին վերաստուգութեան ամենից բանից գծագրելոց ի քննութեանն արարելոյ ընդ ձեռն բարեշնորհ Ստեփան Վարդապետի, ցուցմանց և բացատրութեանց Բարեշնորհ Սարգիս Վարդապետի, սնդամ քահանայից, վարձաւորաց, արհեստաւորաց և այլոց ոմանց, կատարեալ վստահութեամբ ասեմ թէ, որպէս ըստ սկզբանն չքննութիւն արարեալ ընդ ձեռն բարեշնորհ Ստեփան Վարդապետի, պարտի համարիլ իրրև չեղեալ և անվաւեր, նոյն և ըստ էութեան եղեալ է այն հակառակ խղճի և արդարութեան. Զոնի այդ քննութիւն ամենևին վնշղյլ ինչ օրինական կարգապահութեան հետ է ամենևին ի ճշմարտութենէ և զուրկ իսպառ չէր և է յարգելի ապացուցութեանց և փաստից, զի որպէս երևի ի վերոյգրեալ արձանագրութենէ իմմէ ամենայն բանք գծագրեալք յերեսին ևս մասունս արձանագրութեան քննչին ծնունդք են երևակայութեան միայն, և անտեղի և կամովին ենթադրութեանց հիմնեալ ի վերայ յայտնի ստախօսութեանց և ուրացութեանց Խաչատուր քահանայի և ոմանց, ինքնահնչ արհեստաւորաց, լի անվայել, անտեղի և անպատիւ հիւսուածովք բանից, ի չօշափումն պատուոյ և կոչման բարեշնորհ Սարգիս Վարդապետի. Բայ յայտնէ, որպէս երևեցաւ ի վերաստուգութենէ և ի գրաւոր մեկին ապացուցութեանց և վկայաբանութեանց ի ձեռս բերելոց ինձ բազում ելղելութիւնք իսպառ չեղչեղեալք են ի քննչէն, և բազում բացատրութիւնք յառաջ բերեալք ի նմանէ վարձաւորաց և վկայից՝ կեղծեալք են և շինծու. իսկ ընդհակառակն արդարութիւն և ճշմարտութիւն բանից Սարգիս Վարդապետի, գրաւոր թղթովք և վկայութեամբք ապացուցեալք են և վկայեալք յարժանահաւատ պաշտօնական անձանց և առեներատեղեաց. Ուստի և ամենևին չիք ո՛ր և է հիմն օրինական՝ համարիլ վաւերական զքննութիւն արարեալ ընդ ձեռն Բարեշնորհ Ստեփան Վարդապետի նաև ըստ էութեան, և ըստ այսմ ենթարկել զՍարգիս Վարդապետն ո՛ր և է պատասխանատուու-

թեան պահանջմանց և տուրպանաց Պարզ և Յայտնի ստացումն Սարգիս Վարդապետի և ոչ երբեք գալուժն Հնար է համարել միայն 80 րուբլին վարձս այգւոյ առաջնորդարանի վասն երկուց ամաց ըստ 2։ յօդ. բ. մասին արձանագրութեան քննչին, 85 րուբլի վարձագրամս ստացեալս յերկուս վարձաւորաց ըստ 11 ին յօդ. նոյն մասին արձանագրութեան, եւս և 996 րուբլի 50 կոպեկ արդիւնս այգեաց Ադքիրմանի, ընդ ամենայն 1161 րուբլի 50 կոպ. զորոց զստացումն խոստովանեալ է ինքն Սարգիս Վարդապետն Համարելով զինքն ընդ այն յիրաւունս՝ ցորչափ Սինօդն նախապէս չէ ազդարարեալ զնա վասն իրաւանց ստացման այնոցիկ արդեանց ըստ գծագրելոցն, ի բացատրութենէ նորին, որ յ2 հատորի գործոյն քննութեան երես 140։

Ուստի և Սինօդը ըստ օրագրութեան ի 19 Մարտի տալոյս վճռումէ.

«Հրամայէցին. Նախ՝ զքննութիւն արարեալ ընդ ձեռն Ստեփան Եպիսկոպոսի ըստ ի վեր անդր բացատրեալ հանգամանաց, օրինական ապացուցութեանց պարզ և մեկին բացատրութեանց, վկայականութեանց և գրաւոր փաստից համարել իսպառ անվաւեր և զՍարգիս Վարդապետն ազատ կացուցանել ի 14,853 րուբլի 65 կոպեկ պահանջից եղելոց ի վերայ նորա, ըստ այնմիկ անապացոյց քննութեան. Երկրորդ՝ զ1161 րուբլի 50 կոպեկս ստացեալս Սարգիս վարդապետի իբրև առաջնորդական արդիւնք ըստ օրինակի նախորդաց իւրոց թողուլ անպահանջ ի պատճառս սակաւութեան ուժկին. Երրորդ զգրագրութիւնս ըստ այսմ առարկայի կարճել իսպառ և զգործն համարելով աւարտեալ տալ յարխիւն ի պահեստ. Չորրորդ՝ ի մխիթարութիւն քարոյական զրկանաց՝ որոց ենթարկեցաւ Սարգիս վարդապետն, զմտաց օրագրութենէնս տալ հրատարակել յԱրարատ ամսագրի ի գիտութիւն և ի շինութիւն գայթակղեալ մտաց։ և Հինգերորդ որովհետև վերաստուգութիւն սոյն քննողական գործոյն լեալ է ըստ հրամանի Սինօդիս՝ յանձնարարութեամբ նախկին վիճակաւոր առաջնորդին Նոր—Նախիջևանի և Բեսարաբիոյ, այժմ Սրբազնագոյն կամենուղիկոսի ամենայն Հայոց Տ. Մակարայ և ի նմանէ իսկ առ առաջնորդութեամբ իւրով առաջարկեալ Սինօդիս, վասն որոյ և զքաղուածս օրագրութենիս խոնարհաբար մատուցանել ի տեղեկութիւն Նորին Վեհափառութեան, և զայսմ եզրակացութենէ Սինօդիս ծանուցանել Սարգիս Վարդապետի Տէր Գաստպարեանց, ստորագրութեամբ Նորա ի վերայ նախատակի սոյն օրագրութեան»։

---